

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتك جريدة يومية سياسية وأدبية - الدورية المؤقتة - إيثا درويشيان

1500 L.Ո. 76Գ-ՏԱՐԻ, ԹԻԻ 158 (21500) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ՄԻՆԶ ԷՍԹՈՆԻՍՏԻԲ «ԱՅՈ» ԿԸ ԲՈՒԷՍԿԵԻՆ  
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԵԱՆ, ՇՈՒԷՍՏԻԲ  
«ՈՉ» ԸՄԻՆ ԵՒՐՈ ԴՐԱՄԱՆԻՇԻՆ

Միացեալ Եւրոպայի հոլովոյթը երէկ ապրեցաւ նոր իրադարձութիւններ:

Խորհրդային նախկին երկիրներէն Էսթոնիա երէկ քուէարկութեան դրաւ Եւրոպական Միութեան անդամակցութեան հարցը: Ժողովուրդին մեծամասնութիւնը (67,4) «այո» քուէարկեց, արդիւնք մը, որ արդէն իսկ կ'ակնկալուէր բոլորին կողմէ:

Այլ գետնի վրայ, Շուէտի մէջ, շուէտացիք (51,8 առ հարիւր) «ոչ» քուէարկեցին եւրո դրամանիշի անդամակցութեան, 46,2 առ հարիւր «այո» ին դիմաց, արդիւնք մը, որ սակայն անակնկալ մը չէր շուէտական իշխանութիւններուն համար:

ՊԱՍՊԱՍԱ - ԱԼԷՅԻ

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

## ՇԱՆՐԻ ՇԸՆՈՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՒ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ

Երեսփոխան Փիեռ Հըլուի մահով թափուր մնացած մարտնի համայնքի աթոռին համար երէկ Պապատա - Ալէյի մէջ տեղի ունեցան մասնակի ընտրութիւններ, որուն թեկնածու էին չորս անձնաւորութիւններ՝ Հանրի Հըլու, Հիքմաթ Տիպ, Իմատ Հաժ եւ Ապտո Պրժանի: Ընտրութիւններուն իրենց մասնակցութիւնը բերին 58.421 քաղաքացիներ, այսինքն՝ մասնակցելու իրաւունք ունեցող քաղաքացիներուն միայն 20 առ հարիւրը:

Քուէարկութեան արշար առաւօտեան ժամերուն բաւական աշխուժ էր, սակայն հետոյ հետէ ստացաւ աւելի հանդարտ բնոյթ, ապա բանաւոր մամուլին կողմէ որակուեցաւ «ամչկոտ» եւ հասաւ մինչեւ սառելու աստիճանի, յուսախարութեան մատնելով ընտրական մեքենաները:

Նշենք, որ տիրույթներով բնակուած գիւղերուն մէջ ընտրողներուն թիւը եղաւ բարձր:

Ըստ ներքին գործոց նախարարութեան տեղեկութիւններուն, ընտրութիւնները ընթացան հանդարտ ու կայուն մթնոլորտի մէջ, բացի Քֆար Մաթթա գիւղին մէջ պատահած աննշան միջադէպէ մը, որ արձանագրուեցաւ յետմիջօրէին, երբ առնական շարժումի համակիրներ զօր. Միշէլ Աունի որմապղններով շրջեցան Քֆար Մաթթայի մէջ. երեւոյթը պայտոյթ պատճառած է Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան համակիրներուն, որոնք փորձած են արգիլել ինքնաշարժներուն գիւղ մուտքը: Սակայն միջադէպը անմիջապէս հակակշիռի տակ առնուեցաւ բանակին կողմէ, որ ձեռքարկեց նաեւ միջադէպին հեղինակները:

Առնական շարժումին կողմէ հրապարակուեցաւ պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ բողոք յայտնուեցաւ ընտրական հոլովոյթի խախտումներուն մասին: Ըստ հաղորդագրութեան, առնական շարժումի 35 ներկայացուցիչներ ենթարկուած են ուղղակի թէ անուղղակի սպառնալիքներու եւ անոնց արգիլուած է ներկայանալ քուէատուփերը:

Հաղորդագրութիւնը աւելցուց նաեւ, որ կարգ մը գիւղերու մէջ երեւելի դէմքեր, երեսփոխաններ եւ թաղապետեր ժողովուրդը կը ձնշեն՝ պատնիք մղելով թեկնածու Հանրի Հըլուին ընտրելու:

Միւս կողմէ, նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ հետեւեցաւ Պապատա - Ալէյի ընտրութիւններուն եւ ստացաւ շարք մը տեղեկագիրներ, որոնք հաւաստեցին, թէ ընտրութիւնները ընթացած են խաղաղ եւ ապահով մթնոլորտի մէջ, շնորհիւ ներքին գործոց նախարարութեան ձեռնարկած ապահովական միջոցառումներուն:

Նախագահ Լահուտ դրուատեց ժողովրդավարութեամբ առաջնորդող ընտրութիւնները, որոնք առիթ կու տան քուէարկողներուն՝ իրենց պատկանող ներկայանալու քուէատուփ եւ տալու իրենց քուէն:

Իրենց կարգին Պապատա - Ալէյի երեսփոխանական ընտրութիւններու գլխաւոր թեկնածուներ Հանրի Հըլու եւ Հիքմաթ Տիպ իրենց կարծիքները յայտնեցին տեղեկատուական կարգ մը միջոցներու:

Հըլու ըսաւ, որ ինք լաւատես է ընտրութիւններուն արդիւնքով եւ աւելցուց, որ Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոմպիաթի յայտարարութիւնները մեծ ազդեցութիւն չեն գործած ընտրական իր կացութեան վրայ, մինչ Տիպ յայտնեց, որ ժողովուրդը ոչխարի հոտ չէ եւ աւելցուց, որ տիրույթի համայնքի պատկաններուն կողմէ քուէարկողներու թիւի բարձրացումն չի վախճար: (Նշենք, որ ժամկէտային պարակցութիւն յայտնած էր Հանրի Հըլուի թեկնածութեան):

Քուէատուփերը փակուեցան երեկոյեան ժամը 6:00ին:

Կէս գիշերուան ժամը 00:15ին յայտարարուեցան պաշտօնական վերջնական արդիւնքները: Հանրի Հըլու 28,567 քուէով կ'ընտրուի երեսփոխան: Հիքմաթ Տիպ կը ստանայ 25,291 քուէ: Յայտարարուեցաւ, որ Պապատայի մէջ Տիպ աւելի քուէ ստացած է քան Հըլու, մինչ Ալէյի մէջ պատկերը շրջուած է: Ասիկա կը նշանակէ, թէ քրիստոնէայ շրջաններուն մէջ Տիպ աւելի մեծ ժողովրդականութիւն վայելած է, իսկ տիրույթներուն մօտ՝ Հըլու: Մնացեալ քուէները բաժնեկցած են Հաժ (2835) եւ Պրժանի (232):

Այսօր կէսօրին ներքին գործոց նախարարութիւնը կը հաստատէ պաշտօնական արդիւնքները:

## ԻՍՐԱՅԷԼ ԱՐԴԷՆ ԵՏԴԱՐՉ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԱՐԱՅԱԹԻ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԻՐ ՈՐՈՇՈՒՄԵՆ



Իսրայէլ երէկ հաւանական նկատած է պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատի յաւելեալ մեկուսացումը, փոխանակ անոր անմիջական արտաքսումը՝ պաղեստինցիներու եւ միջազգային համայնքին հակադարձութեանէն ետք, անոր արտաքսումին գծով:

Ճարտարարութեան նախարար Էհուտ Օլմէրթ ակնարկելով Ռամալլայի մէջ Արաֆատի կեդրոնատեղիին, ըսած է, որ անոր արտաքսումը «թերեւս միջոց մըն է անկէ ձեռքազատելու, սակայն կարելի է նաեւ պայն ամբողջովին մեկուսացնել մուքաթային մէջ»:

Օլմէրթ, որ նաեւ փոխ վարչապետ է, իսրայէլեան ձայնասփիռին յայտնած է, թէ Արաֆատ չի կրնար «միջին արեւելեան բեմին վրայ տուեալ մը ըլլալ». դիտել տալով, որ անոր արտաքսումը ընտրանք մըն է, «անոր մաքրագործումը այլ ընտրանք մըն է: Կարելի է պայն վետեղել բանտանման պայմաններու մէջ», աւելցուցած է ան:

Իսրայէլեան ապահովութեան դահլիճին Հինգշաբթի օրուան որոշումը՝ Արաֆատը արտաքսելու գծով սկզբունքային համաձայնութեան մը առնչութեամբ, միջազգային լայնածիր դատապարտումի եւ պաղեստինցիներու մօտ պայրոյթի դուռ բացած էր:

Սյունիաներձ Իսրայէլ այդ հակապաղեստինցի քննադատած է, պայն «կեղծարարութիւն» նկատելով:

Անցնող քանի մը օրերուն հապարաւոր մարդիկ հաւաքուած են Ռամալլայի մէջ Արաֆատի գրասենեակներուն առջեւ՝ պաղեստինեան ազայնականութեան խորհրդանիշին իրենց պօրակցութիւնը արտայայտելու համար:

Երէկ առաւօտուն հարիւրաւոր ուսանողներ հաւաքի մը մասնակցած են, մինչ Կապայի մէջ տարբեր խմբակներ ցոյցեր կատարած են նոյն նպատակով:

Իսրայէլեան որոշումը մղած էր նոյնիսկ անոր անէնէն սերտ դաշնակիցը՝ Մ. Նահանգները, որ Թէլ Աւիւր պոլիցիանէ արտաքսումի հետեւանքներէն:

Շար.՝ էջ 10

## ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ԻՐԱՔԱՎՅԱՅՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԳԱԿԵԼՈՒ

ՆԱԽԱՉԵՆՈՒԹԵԱՆ ԿԸ ԴԻՄԵՆ

Հ. Յ. Դ. Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը հաղորդէ, որ Ներկայացուցիչներու Տան մէջ խումբ մը քունկրեականներ իրաքահայութեան օժանդակութիւն հասցնելու նախաձեռնութեան դիմեցին Քոնկրէսին մէջ, կոչ ուղղելով արտաքին գործողութիւններու ենթախանձնախումբին, որ 20 միլիոն տոլարի օժանդակութիւն յատկացնէ գաղութին:

Իրենց պաշտօնակիցներուն ուղղուած Սեպտեմբեր 10 թուակիր նամակով, Ռապրթ Էնտրիւզ (Դ., Նիւ Ճըրզի), Քրիս Սմիթ (Հ., Նիւ Ճըրջի), Մարք Սաուտըր (Հ., Ինտիանա), եւ Քոնկրէսին մէջ Հայկական հարցերու համախմբումի նախագահ Յրէնք Փալոն (Դ., Նիւ Ճըրջի) ներկայացուցին մօտաւորապէս 30,000 հաշուող իրաքահայութեան ներկայ կացութիւնը: Անոնք ընդգծեցին երկրին վանապան փոքրամասնութիւններու կարեւոր դերը՝ «ժողովրդավարացման» եւ կայունացման գործընթացին մէջ, միաժամանակ յիշեցնելով, թէ Իրաքի հայութիւնը «ոչ մէկ ձայն ունի վերջերս նշանակուած 25 հոգինոց կառավարող խորհուրդին մէջ եւ ապահովութեան ու հիմնական իրաւունքներու հարց ունի»:

Նամակով առաջարկուած 20 միլիոն տոլարը մաս պիտի կապմէ Իրաքի օժանդակութեան եւ վերակառուցման հիմնադրամին՝ 2,4 միլիառ տոլար, որ նախատեսուած է երկրի առողջապահական, ըմպելի ջուրի, կրթութեան, էլեկտրականութեան, փոխադրամիջոցներու, հեռահաղորդակցութեան, երկրագործութեան եւ կառավարումի մարզերուն համար:

Մօտաւորապէս մէկուկէս ամիս առաջ, նախագահ Պուշ Ելուին եւ 23 Յուլիս թուակիր նամակով, Հ. Յ. Դ. Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը եւ ամերիկահայ բազմաթիւ կրօնական եւ համայնքային կազմակերպութիւններ իրաքահայութեան դիմագրուած տագնապ ներկայացուցին, միաժամանակ վարչակազմէն խնդրելով, որ նկատառելի օժանդակութիւն հասցնէ անոր:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆԻԹԱԿԱՆԵՆ ԱՒԵԼԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԸ ՆԿԱՏԷ ՀԱՅ ԳՊՐՈՑՆԵՐԸ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՎ ԼԵՑՈՒՆ ՊԱՀԵԼԸ

ԷՁ 4

ԱՁՐՊԵՅՑԱՆ.

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

## ՔԵՐԻՄԼԻ ՊԻՏԻ ՔԱՇՈՒԻ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԷՆ Ի ՆՊԱՍՏ ՄԱՄԵՏՈՎԻ

Այրապէճանի ընդդիմադիր գլխաւոր երկու հոսանքները երէկ համաձայնած են միանալ եւ մէկ թեկնածուով ներկայանալ 15 Հոկտեմբերին կայանալիք նախագահական ընտրութեան, «պարտութեան մատնելու համար Հայտարար Իսիհամ Ալիեւները»:

«Ազգային ճակատ» կուսակցութեան ղեկավար Ալի Քերիմլի յայտարարեց, որ պիտի քաջէ իր թեկնածութիւնը՝ ի նպաստ «Ազգային Անկախութիւն» կուսակցութեան ղեկավար Էթիպար Մամետովի:

(ԱՖՓ)

## «ԱՉԳԱԿ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի բոլոր այն բաժանորդները, որոնք իրենց թերթը կը ստանան մեր ցրուիչէն՝ Նապարէթ Գոնալեանէն, պարտին հեռաձայնել «Ազգակ» (01- 260 115, 01-258 526) եւ փոխանցել իրենց հասցէները՝ ստանալու համար իրենց թերթը, որովհետեւ ան անակնկալ անհանգստութեան պատճառով առժամաբար պիտի չկարենայ իր պաշտօնը կատարել:

Շար.՝ էջ 2

## ՔՈՒԼԻՆ ՓԱՌԻԸԼԻ «ՊԱՏՄԱԿԱՆ» ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՔ

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը երէկ պատմական այցելութեան մը համար հասաւ Իրաք, ուր ամերիկեան ուժերը դարձեալ գոհ արձանագրած էին Ֆալուճա քաղաքին մէջ՝ մահացու նոր յարձակումի մը պատճառով:

Փաուլը Իրաք ժամանած էր անցնելիէ ետք Քուէյթէն, ուր հասած էր ժընեւէն: ՄԱԿի հինգ մնայուն անդամներուն արտաքին գործոց նախարարները ժընեւի մէջ չէին կրցած Իրաքի ապագային գծով ամէնէն հիմնական հարցերը լուծել:

Միւս 2 օր առաջ «բարեկամ կրակոցի» դէպք մը իրաքցի 9 ու-



տիկաններու եւ յորդանանցի պահակի մը կեանքը խլած էր, ամերիկեան ուժերը գոհ մը տուած են շարքաւորուելու, երբ անոնց կարտաւար յարձակումի ենթարկուած է «պայթուցիկ սարքով մը»: 3 այլ պիւտրներ վիրաւորուած են:

Շարք օր տեղի ունեցած է իրաքցի 9 ուտիկաններուն յուրակաւորութիւնը: Անոնց սպանութեան պայմանները երէկ անորոշ կը մնային, բացի ստղէ, թէ անոնք մահացած են բախումի մը ընթացքին, որուն մասնակից եղած են ամերիկեան ուժերը: Այս վերջինները ներդրութիւն խնդրած են դէպքին համար:

Ինքզինք իբրեւ

պատերազմը աւարտած յայտարարուած էր, ամերիկացի 75 պիւտր սպանուած է եւ 667 ուրիշներ վիրաւորուած, Սատտամ Հիւսէյնի հաւատարիմ ուժերու կամ օտար պիւտրներու կողմէ:

98 այլ պիւտրներ սպանուած են արկածներու կամ ճակատումներու հետ կապ չունեցող դէպքերու ընթացքին:

Այլ 138 պիւտրներ պոռնուած են Իրաք ներխուժումին ընթացքին, որ սկսած էր Մարտ 20ին:

Բրիտանացի 50 պիւտր սպանուած է ներխուժումին ընթացքին եւ ստղէ ետք:

## ՍԵՇ ԹԻՌՈՎ ՉՈՇԵՐ

Ամերիկեան բանակը երէկ յայտնած է, թէ Մայիսէն ի վեր, երբ

Շար.՝ էջ 2

### ՊԸՐՐԻ ԻՏԱԼԻՈՅ ՄԷՋ ՊԻՏԻ ՏԵՍԱԿՑԻ ՊԱՊԻՆ ՅԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երկ կաշտոնական այցելությունը մը մեկնեցաւ Իտալիա, ուր հանդիպումներ պիտի ունենայ Յովիաննէս - Պողոս Բ. պապին, ինչպէս նաեւ քաղաքական, պիտորական եւ հոգեւոր այլ անձնատրուքներուն հետ:

### ԻՍԱՍ ՖԱՐԷՍ ԿԸ ԽԱՐԱԶԱՆԷ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ

Փոխ վարչապետ Իսաա Ֆարէս երկ կը յայտարարութիւններուն մէջ ըսաւ, թէ ներկիւրանանեան կացութիւնը աւելի եւս վատթարացած է սկսելով բարգաւաճումի ծրագիրներէն եւ հասնելով մինչեւ օրըստօրէ յայտնաբերուող պետական փտածութեան եւ վարչութեան գործընթացի բարեկարգման:

Նշեալ յայտարարութիւնները Ֆարէս կատարեց Աքքարի մէջ քաղաքապետարանի մը հիմնարկէքին ընթացքին:

Ֆարէս ընդգծեց նաեւ, որ համայնքային ծայրայեղութիւնը չի ծառայեր արդարութեան, որովհետեւ կը քանդէ երկիրը: Ան կոչ ուղղեց ամբողջ Լիբանանի տարածքին վերանորոգելու ենթակառոյցները, ամօք սեպելով նման արիւնտագիտական դարի մը մէջ յետամնաց ապրելու դրութիւնը:

### ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՕԴԱՆԱԲԵՐՈՒ ԹՈՒՉՔՆԵՐ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ԵՒ ՅԱՐԱԻ ԿԵՐԵՒ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը երկ կը հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, թէ երկ կէսօրուան ժամը 12:30ին իսրայիլեան օդուժի վեց օդանաւեր թռչչքներ կատարած են Սայտայի, Ժեպլիսի, Շուֆի եւ Պէյրութի վերեւ:

Մէկ ժամուան տեսողութեամբ թռչչքներէն ետք անոնք ուղղուած են դէպի Մապարէի Շըպաա:

Լիբանանեան Դիմադրութիւնը հակաօդայիններով հակադարձած է անոնց:

**ՄԵԹՐ ԱԻԵՏԻՍ ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ**  
(Փաստաբան՝ Միացեալ Նահանգներէն)  
Յարգոյ յաճախորդներուն կը տեղեկացնէ, թէ 20 Սեպտեմբերէն 6 Շոկտեմբեր 2003 պիտի գտնուի Լիբանան եւ որեւէ դատական, առեւտրական հարցերու խորհրդակցութեան համար պիտի ընդունի զիրենց ամեն օր հետեւեալ հասցէին:  
Օթոստրատ ժոյլտը, YARA Center, «Ալմա-գա»ի դիմաց, Ա. յարկ, հեռ. 01-877740 եւ 03-273266:

### ՄԱՀԱԶԴ

- Տիկին Մարի Ազըլեան
- Տէր եւ տիկին Յակոբ Ազըլեան
- Տէր եւ տիկին Վարուժան Ազըլեան
- Տէր եւ տիկին Գէորգ Ազըլեան
- Տէր եւ տիկին Գէորգ Հայրապետեան
- Տէր եւ տիկին Րաֆֆի Պէրպէրեան
- Տէր եւ տիկին Յովհաննէս Էթիմէզեան եւ զաւակունք
- Տիկին Մարի Ազըլեան
- Տէր եւ տիկին Յակոբ Գուրուժեան
- Տէր եւ տիկին Յովակիմ Ստամպուլեան
- Յովհաննէս, Ժոզէֆ եւ Յակոբ Ազըլեան
- Տիկին Մարի Էթիմէզեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Յակոբ Գոճատուլեան
- Տիկին Կիւլէն եւ Գէորգ Պէսնիլեան
- Տէր եւ տիկին Անդրանիկ եւ Վահէ

Կէօզիւքիւշիկեաններ  
Թիւֆէնքեան, Նորսիկեան, Նալպանտեան  
ընտանիքներ  
կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, հօրեղբօր, աներոջ, քենեկային, քեռայրին եւ հարազատին՝

**ՄԱՆՈՒԿ ԱԶԸԼԵԱՆԻ**  
(Ծնեալ՝ Զիլիս, 1919ին)

մահը, որ պատահեցաւ 13 Սեպտեմբեր 2003ին:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 14 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Հայկա:  
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:

### ՊԱՇԻՐ ԺԵՄԱՅԵԼԻ 21ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

### ՆԱՏԻՄ ԺԵՄԱՅԵԼ ԽՕՍԸ ԱՌԱՒ ՀՈՑ ԲԱԶՍՈՒԹԵԱՆ ՍԸ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

Նախագահ Պաշիր Ժեմայէլի նահատակութեան 21րդ տարելիցին առիթով, Շաբաթ յետմիջօրէին Էշրեֆիէի Ապարիէ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

Հոգեհանգստեան արարողութեան նախագահեց մարոնիներու Սֆէյր պատրիարքի ներկայացուցիչ մարոնի համայնքի Ժիպէյի առաջնորդ Պարա Ռայի եպիսկոպոս:

Ապա եկեղեցւոյ շրջափակին մէջ հապարաւոր ժողովուրդի ներկայութեան խօսք առաւ հանգուցեալ Ժեմայէլի վաւակը՝ Նատիմ Ժեմայէլ, որ ըսաւ, թէ մինչեւ օրս Պաշիր Ժեմայէլի նահատակութեան տարելիցին առիթով կը տեսնէիք Սոյանժ Ժեմայէլը՝ մայրս, բայց այսօր կը տեսնէք զիս:

Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ նաեւ Պասպտա - Ալէյի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն եւ կոչ ուղղեց խիտ շարքերով մասնակցիլ ընտրութիւններուն, քուէները տալով ընդդիմութեան թեկնածուին՝ Հիքմաթ Տիպի:

### ՀԸՄԱՅԵՏ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԿԱՏԷ ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ ԱՄՈՒՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Այուպ Հըմայէտ երկ կը շեշտեց երկիրին ներքին կայունութիւնը ամրապնդող մակարդակներու հասնելու անհրաժեշտութիւնը:

Հըմայէտ հարաւային Լիբանանի Մաժուր Սըլըմ գիւղին մէջ հանդիսութեան մը ընթացքին շեշտեց նաեւ, թէ Լիբանան միշտ կառչած կը մնայ եւ կ'երաշխայորէ իր ներքին ամուր կեցուածքը:

Ան աւելցուց ընդգծելով, թէ Սուրիոյ հետ Լիբանանի եղբայրական յարաբերութիւնները հիմնական բանալին են շրջանին մէջ յառաջիկայ հաւանական վտանգաւոր պարագայուններուն դիմադրութեան:

### ՍՈՒՐԻ ՌԱՇԻՏԻՒ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԳԱՂԹԱԿԱՅԱՆԻՆ ՍԷՋ ԱՐԱՅԱԹԻ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՅՈՅՅԵՐ

Սուրի Ռաշիտիէ պաղեստինեան գաղթականին մէջ երկ Ֆաթի շարժումի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ մեծ ցոյց մը իբրեւ պօրակցութիւն Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի, որ հեռաձայնային ուղղակի հաղորդակցութեամբ մը ցուցարարներուն հասուտեց, թէ պաղեստինեան դիմադրութիւնը պիտի չդադրի մինչեւ երուսաղէսի անկախացումը:

Լիբանանի մէջ Ֆաթի շարժումի ընդհանուր քարտուղար Սուլթան Ապու Սլիմէն զուշացուց իրաջիլը՝ Արաֆաթի իշխանութենէն արտաքսելու որոշումէն, շեշտելով, որ պաղեստինցիները այդ պարագային պիտի վերածուին յարուած ռուբերու՝ իսրայիլի եւ ամերիկեան շահերու սպառնացող:

### ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ՅՈՅՅԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ...

Երկրագործութեան նախարար Ալի Հասան Խալիլ երկ կ'սպառնաց երկրագործներուն հետ ցոյցեր կազմակերպել Հասապայի եւ Մեթուսիլունի մէջ, ինչպէս նաեւ վարչապետարանին եւ խորհրդարանին առջեւ, եթէ երկրագործութեան յատուկ երեսփոխանական յանձնախումբը չընդառաջէ անոնց պահանջներուն եւ չօժանդակէ նշեալ մարտի բարգաւաճման, յատկապէս ձիթաիւղի արտադրութեան:

Խալիլ երկ Հասապայի մէջ կատարեց շրջապտոյտ մը, ընկերակցութեամբ երեսփոխան Բասէմ Հաշէմի:

**ԱԶԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ՔՈԼԷՃ**  
Հեռ. 01/262618  
E-mail:sofiyahag@inco.com.lb  
■ 2003-2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները կը վերսկսին Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003էն սկսեալ, ամեն օր ժամը 9:00էն 1:00, բացի Շաբաթ օրերէն:  
■ Վերաքննութիւններն ու մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ թուականներուն, առաւօտեան ժամը 8:30էն սկսեալ:  
● Երեքշաբթի, 16 Սեպտեմբեր 2003 - Լեզուներ  
● Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2003 - Գիտական  
● Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր 2003 - Այլ Գիւթեր  
● Պրըվի եւ Չ. երկրորդականի դասընթացքները կը սկսին Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003ին:  
● Տարագի եւ գիրքերու ցանկերու յանձնումը կը կատարուի Հինգշաբթի, 25 Սեպտեմբերէն սկսեալ:  
● ՎԵՐԱՍՈՒՄ՝ Հինգշաբթի, 2 Շոկտեմբեր 2003ին:  
**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ**

### ՄԱՀԱԶԴ

- Տիկին Ռոզին Նաճարեան եւ զաւակները՝ Կարօ եւ Վարդգէս
- Տէր եւ տիկին Արրահամ Ճումճեան եւ զաւակը
- Տիկին Ադալեհ Նաճարեան
- Տէր եւ տիկին Գրիգոր Նաճարեան եւ զաւակունք
- Տիկին Քնարիկ Նաճարեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, աներհօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին՝

**ՎԱՆԱԳՆ ԿԱՐԱՊԵՏ ՆԱՃԱՐԵԱՆԻ**

անակնկալ մահը, որ պատահեցաւ Քաթարի մէջ:  
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, OXFORD շէք, 4րդ յարկ, երկուշաբթի 15 եւ երեքշաբթի 16 Սեպտեմբերին:

**ՔՈԼԻՆ ՓԱՌԷԼԻ «ՊԱՏՄԱԿԱՆ»...**  
Շարունակուած Ա. Էջէն  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԻՐԱԷԻ Ի ԽՆԴԻՐ

Փաուրլի, որ Սատտամ Հիւսէյնի վարչակարգին տապալումէն ի վեր Իրաք այցելող ամերիկացի ամենէն բարձրաստիճան պաշտօնատարն է եւ 50 տարուան մէջ ամերիկացի առաջին արտաքին գործոց նախարարը, երկ Պաղտատի մէջ արտաքին գործոց փոխանցման նախարար Հոշիար Չեպարիի հետ տեսակցութենէ մը ետք, թղթակիցներու յայտնած է, թէ Իրաքի մէջ ժողովուրդավարութեան հաստատման յառաջիկայ հանգրուանները պէտք է ըլլան «սահմանադրութեան մը մշակումը եւ այդ սահմանադրութեամբ մարդիկ առիթ պիտի ունենան իրենց կամքը արտայայտելու»:

Փաուրլի Իրաք այցելութիւնը յաւելեալ ցուցանիշ մը կը նկատուի Ուաշինկթընի կողմէ նշանակուած Իրաքի իշխող խորհուրդին հանդէպ ամերիկեան վարակցութեան:

Այսուհանդերձ, Փաուրլի չէ ակնարկած իշխող խորհուրդին անդամներուն առաջարկած 2004 թուականին՝ ընտրութեան կայացման համար: Անոր համաձայն է Ֆրանսա, սակայն ոչ Ուաշինկթըն:

Ժրնէի մէջ, Բրիտանիոյ, Չինաստանի, Ֆրանսայի, Ռուսիոյ եւ Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարները ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ ժողովի մը ընթացքին չեն կրցած համաձայնութիւն գոյացնել իրաքեան ինքնավարութեան ժամանակացոյցի մը կամ երկիրն մէջ ՄԱԿի ապագայ դերակատարութեան շուրջ:

Փաուրլի մերժած է Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիսիք Տը Վիլիքիի իշխանութեան շուտափոյթ փոխանցման եւ յառաջիկայ ցարնան երեսփոխանական ընտրութեանց կայացման առաջարկները, զանոնք «ամբողջովին անիրաւաւոր» նկատելով:

Անան Շաբաթ օր մամլոյ ասուլիսի մը ընթացքին ըսած է, թէ բոլոր կողմերը կ'ուզեն «կարելի եղածին չափ շուտ իշխանութիւնը իրաքի ժողովուրդին փոխանցել», շեշտելով, որ «համախոհութիւնը կենսական է»:

Ժողովէն ետք Տը Վիլիքի ընդունած է, որ «սատիճանակալ մօտեցում մը» անհրաժեշտ է իշխանութիւնը իրաքի ժողովուրդին յանձնելու համար:

Միւս կողմէ, Ռուսիոյ եւ Չինաստանի արտաքին գործոց նախարարները՝ Եկոր Իվանով եւ Լի ժոքսիւնկ ժրնէի ժողովին գրեթէ միջամտութիւն չեն կատարած:

Մոսկուա չ'ուզեր նեղացնել Ուաշինկթընը նախագահ Վլադիմիր Փութինի այս ամսուան վերջը Մ. Նահանգներ այցելութենէն առաջ:

Ճափոնի վարչապետ ձունիչիքո Քոյուրուի երկ ըսած է, թէ Ուաշինկթընի կոչ պիտի ուղղէ աւելի ձկուն ըլլալու՝ ՄԱԿի բանաձեւի մը նախագիծին առնչութեամբ:

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՉԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ**  
**ԺՈՂՈՎԻ ԵՐԱԲԵՐ՝ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ**  
Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարանի տնօրէնութիւնը կը հրաւիրէ ուսուցչական կազմի անդամները 2003-2004 տարեշրջանի նախապատրաստական ընդհանուր ժողովին, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 17 Սեպտեմբերին, Ե. Կ. Ս.ի Պուրճ Լամուտի նորակառոյց ակումբին մէջ: Նախքան ժողովը, առաւօտեան ժամը 9:00ին տեղի պիտի ունենայ բացման աղօթքի արարողութիւն Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ:  
**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ**  
**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՉԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

**ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ԱՅՀԻԼ**  
**ՓՈՆԱԳՐՈՒՄԸ Է ԱՐԴԷՐ «ԱՐԻՆ» ՀԱՄԱԼԻՐ Դ. ՅԱՐԿ**

**Ի ՆՊԱՍՏ Հ. Մ. Ը. Մ.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ**  
**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՀԱՆԴԷՍ**  
Ելոյթ կ'ունենայ **ՓՈԼ ՊԱՐՏԱՆԵԱՆ**, ընկերակցութեամբ **ԽԱՉԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ** եւ իր նուագախումբին:  
Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Պուրճ Համուտի Բաղաքապետարանի դաշտին մէջ:  
Սակ՝ 10,000, 20,000, 30,000 Լ. Ռ.



# 4 ՎԱՅԵԼՈՒՉ ԽՕՍՔԵՐ

Կրկնենք Նարեկացիի կողմից Աստուծոյ մասին գործածուած սա քանի մը ներբողականները: «Աստուծոյ ծագում», «անխորհուրդ անգիտ», «անխորհուրդ անգիտ», «անխորհուրդ անգիտ», «անխորհուրդ անգիտ», «անխորհուրդ անգիտ»: Պատկերները ինքնատիպ են: «Վայելուչ խօսքեր» կ'որակէ Նարեկացի Աստուծոյ համար գործածուած այս ներբողականները: Միայն վայելուչ չեն, այլ նաեւ են խորիմաստ: Այս ներբողականներէն իւրաքանչիւրին մէջ գործածուած է միասնութիւն մը հանձնարելու իմաստալից երկու բառերով, որոնք զիրար կ'ամբողջացնեն: «Աստուծոյ ծագում»: Մագու՛մը գեղեցիկ է ու ներբողալի, բայց աւելի կատարեալ է եթէ ստուեր չունի: Նեցուկը լաւ բան է, բայց անիկա նաեւ պէտք է ըլլայ անխորհուրդ: Հանգիստը որքան լաւ է, բայց շատ աւելի լաւ է եթէ կատարելապէս անվրդով է ան: Աստուած կը բուժէ մեր վէճերը: Ատիկա լաւ է, բայց շատ աւելի լաւն այն է, որ Աստուած անվճար կերպով կը բուժէ մեր վէճերը:

Յաւերթական յոյս, աչք ամենատես, Անկողմակալ ձեռք, անաչառ հայեացք, Մխիթարիչ ծայց, սփոփանքի լուր, Բերկարեցի ազգիւր, Անսայրաք ուղի, անխափան ընթացք, Անսպառ հնարք, անփոփոխ պայման, Անգուցական գուրբ, քաջմարտիչ գորով, Տօնելի խոնարհ, փրկարար համբոյր: Կան դեռ աւելի վայելուչ խօսքեր, Աստուածութիւնդ փառաբանելու, Օրհնեալ, Երբորեալ, գովեալ, քարոզեալ, Աւետարանուած, հնչուած, հռչակուած:

Գրական միշտ նոյն բերնիքն է, որ այստեղ Նարեկացիին գտնել կու տայ Աստուծոյ փառաբանութեան համար փնտռուած «վայելուչ խօսքեր»: Թեքնիքը կը կայանայ երկու բառեր գործածելու մէջ: Միշտ երկու բառեր, որոնք գործածանալիորէն զիրար կը լրացնեն, գործածանալիորէն կը հարստացնեն զիրար եւ միաժամանակ մեզի կը լրացնեն, թէ ինչ է այն, որ այնքան հրաշալի ու կատարեալ կ'ըլլայ, որքան հրաշալի ու կատարեալ է Աստուած: Այսպէս, յոյսը կատարեալ է եթէ յաւերթական է: Ձեռքը շնորհաբեր է եթէ անկողմակալ է, ձայնը հրաշալի է, եթէ մխիթարիչ է, ուղին կատարեալ է եթէ քեզ չի սայթաքեցներ, եթէ ան չի խափաներ քու ընթացքը: Եւ այլն: Այս բոլորը Նարեկացիին համար պատահաբար գտնուած քանի մը «վայելուչ խօսքեր» են, իրականութեան մէջ տակաւին որքան շատ խօսքեր կան, գոր կարելի է գտնել Աստուծոյ փառաբանութեան համար:

Եւ դեռ ինչչեր կան քո կողմէ մեր մէջ կայլակող անլու՛ն անուշ հոսանքով որոնք պիտի ըսուին ու լուսարանուին յաջորդ մասերու մէջ:

Ճիշդ է, եթէ համբերութիւնը չունիք Մատենան կարողալու էջ առ էջ, դանդաղ, ուշադիր, այդ պարագային կրնաք բանալ հարեւրաւոր էջերէն որեւէ մէկը ու նայիլ թէ Նարեկացիին այդ էջին վրայ ինչ «Վայելուչ» նոր խօսքեր գտած է Աստուծոյ համար: Եկէք մօտաւորապէս հարեւր յիսուն էջերու վրայէն ցտուկեք ու նայի՛ք, թէ ինչպէս կը սկսի Մատենանին ՅՅԳՂ բաժինը:

Արդ՝ Տէր գորութեան, մեծութիւն ահեղ, Աներկբայելի տեսարարութիւն, Կամք ամենարաշխի եւ առատութիւն անուագելի, Ո՛վ կրնայ պարեգութեան ճոխ հանդէսով սօցել Յօղի մէկ կաթիլն իսկ քու բարութեան:

Նարեկացիին իր Տէր Աստուածը անգամ մը եւս կ'աստուածացնէ որպէսզի մենք աւելի յստակ կերպով գզանք մեր խեղճութիւնն ու անբաւարարութիւնը այդ «Ահեղ մեծութեան» դիմաց: Աստուծոյ այս «փառաւոր» փառաւորութիւնն է որ անմիջապէս պիտի յաջորդէ ինքնաբերականապէս ինչպէս ինչպէս ինչպէս զՉԸՄԻ ու աղբիւսանքի աղօթքը, աղօթք՝ արտասանուած ըլլալու այն մեղքերուն համար, որոնք գործուած են կամ չեն գործուած: Նո՛յնն է: Կարեւոր չէ թէ չեն գործուած: Մարդը իր բնութեամբ իսկ մեղաւոր է, մեղանշնու ատակ արարած, որ անպայման պիտի մեղանշնէ եւ պիտի փրկուի միայն Աստուծոյ ներողամտութեան արժանանալով:

Աստուծոյ ներողամտութեան արժանանալու ձեւն այլ բացատրելու շատ հետաքրքրական եղանակ մը ունի Նարեկացիին: Վերի դիմաբանութեան ընելէ վերջ, Նարեկացիին մօտաւորապէս սա բառերով խօսք կ'ուղղէ Աստուծոյ.

Տէ՛ր, քու բարեմասնութիւններուն շնորհիւ գիտ պիտի փրկես ու պիտի գուարթանաս, կարծես համբձը մը կերպով ըլլայիր: Պիտի գուարթանաս ո՛չ անշուշտ անոր համար որ գուցէ քեզ շոյուած պիտի գզաս իմ սնտարապատուած երգերուս դատարկ փառաբանութեան, այլ պիտի գուարթանաս անոր համար որ փրկեցիր զիս, ընդունելով իմ այս փոքրիկ աղբիւսանքը:

Ահաւասիկ Նարեկացիին, որ մէկ կողմէ ամենազեղեցիկ ու շնորհալի նախադասութիւններով կը գովարանէ զԱստուած, մէկ կողմէ այլ մտած է թէ Աստուած այդ գեղեցիկ խօսքերուն համար չէ՛ որ պիտի փրկէ զինքը, այլ պիտի փրկէ անոր համար որ արարի է եւ կը գուարթանայ մարդիկը փրկելով: Նարեկացիին առաջուց ըսած էր արդէն. Այս բանաստեղծութիւնները գրուած չեն զԱստուած կաշառելու համար:

## ԳՊՐՈՅԱԿԱՆ ՎԵՐԱՍՈՒՑԻՆ ՍԵՄԻՆ՝

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆԻԹԱԿԱՆԵՆ ԱԻԵԼԻ ԱՌԱՋՆԱԿԵՐԹ ԿԸ ՆԿԱՏԷ ՀԱՅ ԳՊՐՈՅՆԵՐԸ ՀԱՅ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՎ ԼԵՑՈՒՆ ՊԱՇԵԼԸ

Ուսումնական Ոոր տարեշրջանին նախօրեակին լիբանանահայ ազգային վարժարանները կը պատրաստուին Ոոր թափով վերսկսելու կրթական տարին: Մանկապարտեզի դասարաններու կրթական ծրագրին վերանայումն ու ուսուցիչներու վերաորակաւորման աշխատանքներուն կ'ընկերանայ ազգային մանկապարտեզներու անվճար ուսման դրութիւնը: Միւս կողմէ, Ուսումնական խորհուրդն ու ազգային վարժարանները կը շարունակեն տնտեսական տագնապին համար ելքերու փնտռումը: Ուսումնական տարեշրջանի սեմին հետեւեալ հարցազրոյցը ունեցանք Ազգային առաջնորդարանի Ուսումնական խորհուրդին հետ:

Հ.- Յառաջիկայ վերամուտին նախօրեակին, ազգային վարժարանները ի՞նչ պէս պատրաստուած են ունեցաւ համար արդիւնաւետ տարեշրջան մը:

Պ.- Պատրաստ ենք վերամուտը դիմաւորելու աւելի կազմակերպուած ձեւով: Այս տարուան մեր պատրաստուածութիւնը կը յատկանշուի անով, որ առարկայականօրէն ճանաչած ենք մեր գործուող ուսուցիչները եւ կատարած վերադաստիարակումները:

Ներքին իմաստով, կատարուած են վարչական յստակացումներ, կարգաւորուած են ուսուցիչներու թղթածրարները եւ դասուորուած են հաշուական, ստորաբաժան, պետական արձանագրութիւններու եւ յետնեալ հաշիւներու աշխատանքները: Վերամուտին ուսուցիչը պիտի ունենայ ազգային վարժարաններու վերամշակուած կանոնագիրը:

Ինչ կը վերաբերի կրթական բաժինին, մանկապարտեզի վերածրագրաւորումն աշխատանքներուն կողքին, արդէն իսկ մամուլի տակ է եւ վերամուտին աշակերտներուն տրամադրութեան տակ կ'ըլլայ թուրքահայերէն «Անու լէ մաթ» դասագիրքին հայերէն հրատարակութիւնը՝ «Մտածենք եւ լուծենք», որ լուծումը պիտի ըլլայ տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող տաղանայի մը:

Հ.- Բնականաբար Ուսումնական խորհուրդին եւ ազգային վարժարաններուն դիմաց յառաջիկայ տարեշրջանին եւս կրնան ցցուիլ նիւթական դժուարութիւններ: Ի՞նչ պէս կը նախատեսք յաղթահարել զանոնք:

Պ.- Անցեալ տարեշրջանին յառաջացած պիտեմէական յանձնախուժման կազմուած Ազգային առաջնորդարանի ֆազդակալ ժողովի, տնտեսական յանձնախուժման եւ Ուսումնական խորհուրդի ներկայացուցիչներէն, տարեշրջանին սկիզբի լուրջ քննարկումներով վարժարանէ կը պահանջէ իր տարեկան պիտեմէին նախաձեռնելու: Այս ամբողջ տարուան ընթացքին Ուսումնական խորհուրդը կը հետապնդէ նիւթական բաժինը, իսկ պիտեմէական յանձնախուժման նախաձեռնողը կ'ըլլայ, որ ծախսերը համապատասխան են նախաձեռնելու: Հաշուաւոր ասոր եւ հաշուաւոր տնօրէններու ճիգերուն, բարեարներու նուիրատուութիւններուն եւ ձեռնարկներու հաստիքներուն, դպրոցները տակաւին նիւթական բացի մէջ են, որովհետեւ մեր թաղային վարժարաններու ծնողները տնտեսական տագնապին պատճառներով չեն կրնար վերամուտին իրենց խոստացած թոշակները վճարել: Եւ ասոր հետեւանք կ'ըլլայ այն, որ երբ ծնողները պարտքով փակուի տարին, յաջորդ տարեմուտին աւելի հաւանականութեամբ մտածեն իրենց զաւակները օտար վարժարան դրկելու մասին:

Յաջողած ենք մինչեւ 2001-2002 տարեշրջանը փակել ուսուցիչներու յետնեալ վճարումներուն 95 առ հարիւր, իսկ յառաջիկայ տարեշրջանի աւարտին կը յուսանք, որ բարեխաղի ամսականներու վճարման հետեւողականութիւնը:

Հ.- Ի՞նչ միջոցառումներու կը դիմէք շրջանցելու համար տնտեսական այս ծանր տագնապը:

Պ.- Տնտեսական տագնապը յաղթահարելու համար առաջ կը տանինք երեք ձեւի աշխատանք: Արած Ա. կաթողիկոսը յատուկ շրջաբերական մը յղած է ըրելը թե՛ մերուն՝ օժանդակութեան կոչ ուղղելով լիբանանահայ ազգային վարժարաններուն, տրուած ըլլալով, որ լիբանանահայութիւնը տակաւին կը հանդիսանայ Սփիւռքի մարդուժ պատրաստող կեդրոնը: Իրեւ զործնական բայլ այս շրջաբերական գիրին՝ Ուսումնական խորհուրդը նախաձեռնեց Սփիւռքի տարբեր շրջաններուն մէջ անոր միացնել սան պահելու արշաւ մը: Անշուշտ Լիբանանի մէջ եւս կան որոշ թիւով սան պահողներ: Կը յուսանք, որ այս արշաւը տարեկան մնայուն եկամուտ մը ապահովէ ազգային վարժարաններուն:

Մրցարած ենք նաեւ շարք մը ձեռնարկներ, որոնց հաստիքները պիտի թեթեւցեն նիւթական բեռը: Պէտք է նշենք, որ աշխատանք կը տանինք ապահովելու նիւթական տագնապին հիմնական լուծում մը, որպէսզի կարելի ըլլայ տարիներէ ի վեր կուսակուած նիւթական բեռը թեթեւցնել:

Անցնող երկու տարիներուն ընթացքին, պիտեմէական յանձնախուժման եւ մանաւանդ տնօրէններուն հետ գործակցարար, առաւելագոյն չափով անձնակազմի սեղմում կատարուեցաւ: Ճիշդ է՝ ծանրաբեռնուեցան ուսուցիչներ, սակայն այս միջոցառումը զրական անդարձ արժանեցաւ ընդհանրապէս անհատ բարեարներու, «Գ. Կիւլպէնկեան» հաստատութեան, հիմնադրամներու մօտ: Միտում չկայ, այլ՝ յստակ ծրագրում, ինչ որ կ'աւելցնէ անոնց նուիրատուութիւնները: Ստեղծուած թափանցիկութեան եւ փոխադրած փոստակութեան այս միջոցառումն մէջ արդէն իսկ աւելեցան գործնական քայլեր:

Հ.- Արդեօք կրնա՞ք բնել, որ ուսուցիչներուն այս ծանրաբեռնումը ժամանակաւոր բնույթ ունի:

Պ.- Այո՛: Օրինակ, մանկապարտեզներու պարագային մանկապարտեզներու հիւնդը յառաջիկայ տարեշրջանին սկսեալ դասարանի պատասխանատուութիւն պիտի չստանան: Արեւստի դասակարգելու պիտի յանձնուին արուեստի ուսուցիչներու եւ այսպիսով գտնէ մաս-

սամբ պիտի մեղմանայ մանկապարտեզի ուսուցչուհիներուն բեռը: Բնականաբար հետագային պիտի վերադասաւորուին նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի ուսուցիչներուն պահերը եւս:

Հ.- Անցեալ տարեշրջանը Ազգային առաջնորդարանի կողմէ յայտարարուած էր Ազգային վարժարաններու տարին: Այդ միջոցառումն մէջ իրականացուած մշակութային քէ ընկերային ձեռնարկները զրական ի՞նչ արդիւնք ունեցան: Նման նախաձեռնութիւններ պիտի կրկնուի՞ն յառաջիկայ տարեշրջանին:

Պ.- Ստեղծուեցաւ զրական միջոցառում, որ գործուեց թէ՛ դպրոցներէն ներս եւ թէ՛ անոնց միջեւ գործակցութիւնը: Իսկ նիւթապէս ապահովեցինք գոհացուցիչ եկամուտ մը, որ աւելի բարձրացուց ուսուցիչներուն կողմը:

Բնականաբար տրամադիր ենք աշխատանքները նոյն ոգիով շարունակելու:

Հ.- Ի՞նչ մտահոգութիւններէ մղուած կազմակերպեցիք ամբողջ սկիզբը տեղի ունեցած ազգային մանկապարտեզներու ուսուցիչներու վերաորակաւորման համագումարը եւ ի՞նչ արդիւնքի հասար:

Պ.- Մեկնելով ազգային վարժարաններու կրթական ծրագրի ներքին վերադասաւորման եւ ուսուցման մեթոտներու վերադասաւորումի ընդհանուր անհրաժեշտութեան մը, առաջին քայլը առինք սկսելով ուսման առաջին հանդիսականն՝ մանկապարտեզէն: Տարեշրջանին ընթացքին այցելեցինք ազգային մանկապարտեզներ, հանդիպումներ ունեցանք մանկապարտեզի ուսուցչուհիներուն, մանկապարտեզներու հետ տնօրէններուն հետ: Կային որոշ մտահոգութիւններ եւ հարցեր, որոնք լուծման կը կարօտէին: Նոյն ժամանակ միջոցներ հրաւեր ստացանք ինթընէշնըլ քոլէճէն՝ մասնակցելու մանկապարտեզի դասարաններուն համար իրենց տարեկան աշխատանքային հանդիպումին: Ընդառնալից հրաւերէին, եւ ապա զարգացաւ մեր մանկապարտեզներուն հարցերուն լուծում եւ պահանջներուն գոհացումը տուող աշխատանքային համագումար մը կազմակերպելու գաղափարը:

Վերաորակաւորման կողքին, աշխատանքային համագումարին հիմնական նպատակն էր գետեղել մանկապարտեզի յստակ, մանրամասն, միասնաբար ծրագրի: Իւրաքանչիւր դպրոց գործնական աշխատանքներու իրականացման բաժին մը ստանձնած էր: Պէտք է նշենք, որ ըրողը տուին իրենց լաւագոյնը: Մեր մանկապարտեզներուն աշխատանքներուն ծրագրի մասին միջոցներ ինթընէշնըլ քոլէճէն համագումարին պատասխանատուներուն, որոնք մեր խումբին հետ են մեր կարիքներէն իրաւ ձեւով գծեցին նախագիծ մը: Կը շնորհակալուինք մեր մանկապարտեզի գեղեցիկ աշխատանքներուն ծրագրի մասին յառաջիկայ տարեշրջանին ընթացքին պիտի գումարենք ամսական դրուժանները անհախառնելով, որոնց ընթացքին պիտի գնահատուին ծրագրին գործադրութիւնն ու արդիւնքները:

Այստեղ գնահատանքի խօսք ունինք մեր ուսուցիչներուն նկատմամբ, որոնք ամբողջ արժակուրդի օրերուն իրենց շինիչ մասնակցութիւնը բերին աշխատանքային համագումարին, ինչպէս նաեւ՝ անոր նախորդող եւ յաջորդող հանգրուաններուն: Անոնց միջեւ ստեղծուած փոխադարձ գործակցութիւնը անպայման որ իր զրական արդիւնքը պիտի տայ յառաջիկայ տարեշրջանին ընթացքին:

Հ.- Այսպիսի ծրագրերը նախատեսու՞մ են մնացեալ բաժանմունքներուն համար:

Պ.- Կը ծրագրենք ուսուցիչներու եւ ուսուցման մեթոտներու այս վերաորակաւորման աշխատանքները յառաջիկային շարունակել նախ նախակրթարանի առաջին երեք դասարաններուն եւ ապա՝ մինչեւ երկրորդականի բարձրագոյն կարգերուն համար: Կը ծրագրենք նաեւ հայագիտական դասարաններու դասաւանդման վերածրագրումն ու վերաորակաւորումը:

Հ.- Յառաջիկայ տարեշրջանին համար հաստատած էք մանկապարտեզի անվճար ուսման դրութիւն մը: Ի՞նչ է այս երեւոյթի տուժող պատճառը:

Պ.- Մեր այս որոշումը կը նպատակադրէ ձեռք երկարել ծնողներուն, որովհետեւ կը գիտակցանք անոնց տնտեսական ծանր բեռին: Նաեւ նկատուած ենք զէ՛պի օտար վարժարաններ հայ աշակերտներու հոսքը: Պիտեմէական յանձնախուժման կողմէն կարողանալու թիւնը, յարմար նկատեց հանգրուանի մը համար նախաձեռնել մանկապարտեզի անվճար ուսման: Հայ վարժարանները պէտք է լեցուին հայ աշակերտներով:

Հ.- Ձե՞ք կարծել, որ այս որոշումը աւելի եւս չի ծանրաբեռնել Ուսումնական խորհուրդին նիւթական վիճակը:

Պ.- Պիտեմէական յանձնախուժումը ստանձնած է նիւթականը ապահովելու հարցը: Սակայն կը շնորհակալուինք զամբողջ համար նիւթականը կը գիշի հայ դպրոցները հայ աշակերտներով լեցուն պահելու առաջնահերթութեան: Կը յուսանք, որ այս աշակերտները իրենց նախակրթարանի եւ երկրորդականի ուսումը եւս ազգային վարժարաններու մէջ ստանալով՝ կայուն պահեն եւ աւելցնեն հայկական վարժարաններ յանձնառողներուն թիւը:

Հ.- Վերամուտի նախօրեակին ի՞նչ խօսքով կը դիմէք հայկական վարժարաններու ծնողներուն եւ ուսուցիչներուն:

Պ.- Մեր ուսուցիչներուն կը մաղթենք եռակի համբերութիւն եւ գիտակցութիւն, որոնց փաստը տեսած ենք արդէն: Իսկ ծնողներուն կը յանձնարարենք վստահութիւն ունենալ ազգային վարժարաններուն կրթական եւ դաստիարակչական մակարդակներուն, որոնք կը մնան բարձր:

**ԿՈՒՉՈՒԻՆ**  
●Այր մարդու շապիկ կարող փորձառու գործուորուիներ: Դիմել՝ հեռ. 01-259196:

**ԿՈՒՉՈՒԻ**  
●Վաճառող շրջուն ներկայացուցիչ մը, հիմնաւորի (ունւմի) տեղաբաժնուցիչ պայման: Հեռ. 03-290777:

**ԿՈՒՉՈՒԻՆ**  
●«Hampy» հաստատութիւնը կարիք ունի կարի մեքենայի վրայ աշխատող երիտասարդ դերձակուիներու: Հեռ. 01-254129:


**Կրթական նախկին նախարար ԱԳՏԸԼ ՌԱՀԻՄ ՄՐԱՏԻ վկայութիւնը ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ**

**30-ամեակին առթիւ**  
«...Լիբանանի մէջ թեքնիք ուսման ճանրուն վրայ մեծ է ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ ներդրումը: Այս գոյէճի արձանագրած յաջողութիւնը ինքնին աղաղակող փաստ է, թէ ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃ 30 տարուայ ընթացքին յաջողած է իր առաքելութեան մէջ եւ շահած նախարարութեան անբողջական վստահութիւնը: 30ամեակին առթիւ, որպէս կրթական նախարար կը շնորհաւորեմ շրջանաւարտները եւ քոյէճի հիմնադիր-տնօրէն պրն. Պետրոս Շնամէսեանը...»:

Խօսուած՝ Ուրբաթ, 12 Յուլիս, 2002, վկայականաց բաշխման հանդէսի ընթացքին







# Աշակուբային էջ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԵՐԱՐՈՒՄԵՍԱԳԵՏՆԵՐ

## ՏԻԳՐԱՆ ՀՈՎՈՒՄԵԱՆ




Ըստ երեւոյթին, խորհրդային կարգերու անտրամաբանական եւ անհեթեթ կեանքը եւս իր շօշափելի ազդեցութիւնը ունեցած է հայրենի կերպարուեստագէտներու գերիրապաշտ գոյացողութեան վրայ: Թեքեւս այս հանգամանքով է, որ կարելի կ'ըլլայ բացատրել, թէ ինչու՞ անոնցմէ շատ շատեր կը հետեւին գերիրապաշտ դպրոցին: Այնուամենայնիւ, սակայն, հայրենի կերպարուեստագէտներու գրեթէ ամբողջական ընկալումը կ'ընթացէ իրենց անհեթեթութեամբ կը մտնեն անհեթեթ-գերիրապաշտութեան սահմաններուն մէջ, որ յատուկ է առհասարակ նախկին խորհրդային երկրներուն:

Գեղանկարիչ է միաժամանակ: Անոր տաղանդը նոյն ուժգնութեամբ կը փայլի երկու մարգերուն մէջ ալ: Ան թէեւ զասականօրէն երփնազերելու եւ ծեփակերտելու բացառիկ վարպետութիւն կը ցուցաբերէ, սակայն անոր ստեղծագործական աշխարհը գերիրապաշտ ոլորտներն են, ուր իր երեւակայութիւնը կ'արտայայտուի լայն կարկինի տակ:

Տիգրան Հովումեան կ'ապրի եւ կը ստեղծագործէ իրականի եւ ոչ իրապաշտութիւնը ոչ միայն հետեւ կը մնայ անցնող դարասկզբին ու դարու կիսուն ստեղծութեամբ եւ կազմաւորութեամբ գերիրապաշտութեան, այլ նաեւ անոնք իրենց անհեթեթութեամբ կը մտնեն անհեթեթ-գերիրապաշտութեան սահմաններուն մէջ, որ յատուկ է առհասարակ նախկին խորհրդային երկրներուն:

Տիգրան Հովումեանը եւս անվերապահօրէն կարելի է դասել անհեթեթ-գերիրապաշտ տաղանդաւորներուն շարքին: Ան ծնած է Երեւան, 1969ին: 1984ին աւարտել է ետք Յակոբ Կոճայեանի անվան գեղարուեստի դպրոցը, կ'ընդունուի Փեթրլեմբեգեանի անուան կերպարուեստի ուսումնարանը, գոր կ'աւարտէ 1989ին: Իր ցուցաբերած օժտուածութեան շնորհիւ կ'ընդունուի նաեւ Երեւանի գեղարուեստաթատերական բարձրագոյն հիմնարկի քանդակի բաժանմունքը, ուրկէ կը վկայուի 1995ին: Տիգրան Հովումեանը քանդակագործ եւ



Տիգրան Հովումեան հայրենի երիտասարդ սերունդի կարկառուն եւ մեծ ապագայ խոստացող դէմքերէն կարելի է նկատել...

լուգուելով կը կերտեն աշխարհ մը, որ իրն է անկասկած: Կին կերպարի գուգահեռ, իր արուեստին մէջ ի յայտ կու գան նաեւ առասպելական կենդանիներ ու այլ էակներ, որոնք հարազատ դրսեւորումը կը հանդիսանան անոր կերտած հեթիաթային ու երազային միջավայրին:

Այս ուրոյն ստեղծագործական ոլորտի տէր կերպարուեստագէտին ներկայանալը հարուստ է վրձինը հմուտ ու համարձակ, իսկ ընդգրկած նիւթերն ու կերտած կերպար-

ները բազում են ու բազմազան: Անոր արուեստը լիցքաւորուած է արտայայտիչ ներքին ուժականութեամբ, ուր խորհուրդներն ու խորհրդանշանները մէկ կողմէ կու գան ցեղային սկզբներէ եւ, միւս կողմէ, կը բացուին ժամանակակից կեանքին վրայ:

Տիգրան Հովումեան հայրենի երիտասարդ սերունդի կարկառուն եւ մեծ ապագայ խոստացող դէմքերէն կարելի է նկատել...

Տիգրան Հովումեան հայրենի երիտասարդ սերունդի կարկառուն եւ մեծ ապագայ խոստացող դէմքերէն կարելի է նկատել...

## ՊՈԹԻՉԵԼԼԻՑ՝ ՏԱ ՎԻՆՉԻ

Տիգրապետ, գրող, գեղանկարիչ եւ արուեստաբան Գր. Գուրգադեանի վերածնունդի մասին գրած յօդուածի առաջին եւ երկրորդ բաժինները արդէն իսկ ներկայացուցած ենք մեր ընթերցողներուն. այժմ կ'արտատպենք երրորդ եւ վերջին բաժինը:

Ահա աշխարհ է գալիս վերածննդի գագաթներից մէկը՝ Պոթիչելլին (1435-1488) իր ծննդով ու ամէն ինչով տիպիկ Ֆլորենտացի:

Արդէն վաղ շրջանի գործերում ուշադրութիւն էր գրաւում առնական ուժը նրա նկարների, ուժեղ լուսաստուկերով նա հասնում էր քանդակի փլաքիքային: Նա յայտնում է ուշադրութեան կենտրոնում, բացում են Մետիչինների դռները նրա առաջ: Առանձնապէս բարեհաճ էր Լորենցո Աբանչելլին. նրա պալատում երիտասարդ նկարիչը հնարաւորութիւն է ստանում առնչուել բարձր, նրբաճաշակ մշակոյթին, որը եղել է բնորոշ այդ շրջանին: Հանդիպումներ է ունեցել բանաստեղծների, փիլիսոփաների հետ, առնչուել է հին առասպելաբանութեան ու գրականութեանը: Այս շրջանում էլ նա՝ Պոթիչելլին, կարծես թէ գտնում է իր ուղին՝ հակասութիւններով ու տարուբերումներով լեցուն: Նա սկսում է տարուել բանաստեղծական այլաբանութիւններով, հին առասպելաբանութեան յագեցնելով այդ ամէնը զգացական բովանդակութեամբ: Նրա կառուցուածքներում սկսում է երեւալ բնութիւնը, ուժանտիկ շնչով պարուրուած կանացի սքանչելի մարմինները բնութեան խորպատկերին...

Այս առումով գագաթնակէտը Պոթիչելլիի պիտի համարել անշուշտ «Վենեթայի ծնունդը», ինչպէս նաեւ «Գարունը»: Այս գործերում Պոթիչելլի բանաստեղծն է, ինքնամոռաց բանաստեղծ, աշխարհից կտրուած, վերերկրային, հեթիաթային կեանքով ապրող. իրական մարմիններ են, իտէլալ կնոջ մարմին, որպէս բանաստեղծութիւն, որպէս բարձրագոյն չափի գեղեցկութեան... Եւ բոլորովին նոր ձեւ, նոր կերպ այդ հրաշալի մարմինները բնութեան հետ կապելու՝ ծովը մի դէպքում սաղարթախիտ, բազմազոյն անտառը՝ միւս... Եւ դիտողը հրաշալի է հասկանում ողջ պայմանականութիւնը պատկերուածի, մարդ կամայն մտածում է՝ ի՞նչ լաւ կը լինէր, եթէ կեանքը այդպէս լինէր միշտ... Նա ստեղծում է սահմանը երեւակայութեան, այն, թէ ինչպէս պիտի փնտրուի ու հասկանալ գեղեցկութիւնը... Կեանքի կարօտ, մեծ կարօտ կայ նրա բոլոր գործերում, ամէն մանրուքում՝ ծաղիկը, խոտը, ծառը, ալիքները ծովի... Թեթեւ, թափանցիկ քողի տակ համալք կեցւածի, հայեացքը... Աստուածուհի չէ, բայց իրական էլ չէ... Պոթիչելլին ստեղծեց իր, միայն իր հասկացած ու սպորտած կերպարը...

Պոթիչելլիով ասպարէզ եկաւ բոլորովին նոր տրամադրութիւն, նոր ընկալում արուեստում: Եթէ նոյն 15րդ դարի առաջին կէսի նկարիչներին հրապուրում էր իրական կեանքն իր բոլոր դրսեւորումներով, իր ողջ բազմազանութեամբ, ապա այդ նոյն դարի երկրորդ կէսի նկարիչները գործերում երեւացին եւ այնպիսիները, որոնց աւելի շատ հրապուրում էր մտացածին-պայմանական, ինչ-որ տեղ հեթիաթային աշխարհը, մնալով միեւնոյն ժամանակ իրապաշտութեան հողի վրայ՝ իրական մարմին, իրական երկինք, ծով եւ այլն: Պոթիչելլին եղաւ հաս ծայրայեղ արտայայտութիւնը այս կերպարանափոխութեան: Նրա արուեստում շողկապուած են համարձակ իրապաշտ զգացողութիւնը հին մարդասիրական պատրանքների հետ:

Մետիչինների պատուէրով Պոթիչելլին ստեղծում է մի հակայ շարք գեղանկարչական աշխատանքներ, մտահարուր նկարից բազմազան, ամբողջովին Տանթէի «Աստուածային կատակերգութեան» նիւթերով: Այստեղ արդէն ամբողջովին տրամաքիկ իրադարձութիւններն են, զգացական բնութագրեր: Արուեստաբանների գնահատմամբ, այս շարքը եղաւ նահանջ իր՝ Պոթիչելլիի ուժանտիկից: Ըստ երեւոյթին դա հասկացաւ եւ ինքը՝ Պոթիչելլին. նա վերադառնում է իր նախասիրութիւններին, բայց այս անգամ յագեցած նոր զգացումներով, նոր տրամադրութեամբ՝ տագնապ, անորոշութիւն, անհանգստութիւն...

Իր բանաստեղծական շնչով, երեւակայութեան հարստութեամբ ու անբեկանակալի բազմազանութեամբ Պոթիչելլի արուեստը չունեցաւ իրեն հաւասարը: Ֆլորենցեան վերածնունդը չէր ստանայ իր լիակատարութիւնը առանց Պոթիչելլի: Եւ թէպէտ կեանքի վերելում նրա արուեստը գարձաւ ինչ-որ չափով թախծոտ, վերերկրային, բայց բոլոր գէպերում նա եղել է գեղեցիկ, հմայիչ... վերջապէս, լինում է, երբ մարդ ուզում է հեռանալ իրականութիւնից ու փնտրել Պոթիչելլին...

Բոգոմի Մետիչին ունեցել է Ֆլորենցիայում միայն մի մրցակից՝ Լուքա Փիթիին, ազաւ ու ցուցամուլ, չափազանց հարուստ, չափազանց փառասէր ու չափազանց յանդուգն մի մարդ: Նա 15րդ դարի կէսերին իր զինուած կողմնակիցների օգնութեամբ գաւթում է իշխանութիւնն ու դառնում, մի որոշ ժամանակ, տէրն ու տիրակալը Ֆլորենցիայի: Իր այս վերելքը նա որոշում է յաւերժացնել մի հակայ պալատի ստեղծմամբ: Պոթիչելլեցիի համբաւը շատ էր մեծ, ու Փիթիին նրան է յանձնարարում, իրականում պարտադրում, այդ պալատի ստեղծումը: Ընտրում է տեղը՝ Առնոյի ալ ափից քիչ վեր, ոչ բարձր սարահարթի վրայ: Պոթիչելլեցիին հասցնում է միայն նախագծել պալատը, շինարարութիւնը աւարտում է իր մահուանից յետոյ: Փիթիի փալացոյց... Չէ թէ Ֆլորենցիայում, Եւրոպայում անգամ հազիւ թէ գտնուի պալատ աւելի կոթողային աւելի հոյակապ, քան Փիթիին է: Տպաւորու-

թիւնն առաջին անգամ տեսնողի վրայ պարզապէս ցնցող է: Մարդ ակամայ քարանուձ է տեղում՝ հայեացքին փոռած տեսարանից: Հակադրութիւնն այն է, որ ճարտարապետական տեսակէտից Պոթիչելլեցիի այս գործը չունի ոչ մի նմանութիւն նրա նախորդ գործերի հետ, սա բոլորովին նոր խօսք է, նոր գաղափար:

Ամէնից առաջ դիրքը պալատի՝ շրջապատը բոլոր կողմերից ազատ, ընդարձակ տարածութիւն է: Պալատը, երկարուկ, երեք շարք հսկայ պատուհաններ, պատերը գրեթէ սպիտակաւուն՝ կապտաւունի երանգով, ահռելի չափերի՝ երկու, երեք մինչեւ հինգ մետրանոց կրաքարի անտաշ բեկորներից բարձրացրած... Տաշած են քարաբեկորների միայն եզրերը, դրանք պահել են իրենց բարբարոս ծագումը... Ոչ մի գարդարանք, ոչ մի պաճուճանք, չկան ճարտարապետական սովորական ձեւերը... Իրենց հզօր չափերով ու մանրամասնութիւնների բացակայութեամբ կառույցը արտայայտում է ուժը բնութեան... Պատուհանները շատ են մեծ, նոյնպէս առանց յարդարանքների, այստեղ քարն է միայն տիրութիւն արել, թուում է՝ մարդը չի ունեցել անելիք... Պարզ չէ նաեւ ինչպէս են քարանայում կտրել, տեղափոխել ու բարձրացրել պատի վրայ այդ երկարութեան քարաբեկորները... Թուում է դա աւելի շուտ հսկաների գործ, քան՝ մարդու...

Հայեացքն անկարելի է պոկել այդ հրաշքից... Պոթիչելլեցիի հանձարը...

Փիթիին չվայելեց այդ հրաշքը, ի վերջոյ դա անցաւ Մետիչիններին... Այստեղ անցկացուել են շուտուած չտեսնուած խրախճանքներ, հարսանիքներ արքայական ընտանիքների, ընդունելութիւններ բարձրատոհմիկ իտրակայների, ճոխութիւն ու ցոփութիւն... Բայց եղել է, երբեմն-երբեմն, հաւաքատեղի նաեւ մտաւորականների, գիտութեան մարդկանց, բանաստեղծների, նկարիչների մտաւորականութեան...

Հիմա Փիթիին թանգարան է: Անհաշիւ իրեր, մալախիտի սեղաններ, փղոսկրայի գարգեր, խճանկարի կահ-կարասի, բաժակներ, գորգեր, գեղարուեստական նկարներով գորգեր անհաշիւ... Բացառիկ պալատ իր հարստութեամբ, բայց ամէնից արժէքաւոր արուեստի հազարգիւտ գործերն են բոլորն էլ դասականներից, այդ թւում վերածննդի, կաթիցիսի, ուժ-տաս հոյակապ դիմանկարներ, հինգ-վեց գործ Ռաֆայէլից, այդ թւում նրա հուշակաւոր «Ֆլորենցիան» դիմանկար այդ շքեղ գեղեցկուհու, որին իր կեանքը տուեց վերածննդի այդ հանձարը... Այստեղ մտնելուց յետոյ դժուար է դուրս գալ...

Պէտք է այնուամենայնիւ ընդունել, որ հեռոււոր անցեալին իշխողները զիս կեանքից մնացած ու մինչեւ մեր ժամանակները հասած ճարտարութիւնը, այդ երեւակայական պալատները, անթիւ, անհամար կառույցներն իրենց ողջ պարունակութեամբ, ի գուր չեն անցել, այսպէս թէ այնպէս դրանք ամէնուր դառնում են հասարակութեան, երկրի սեփականութիւնը: Այն կարելի տարբերութեամբ, որ այդ ամէնը ստեղծողները չէին կարող ենթադրել անգամ, թէ ի վերջոյ ով կը դառնայ իսկական տէրը այդ արժէքների...

\*\*\*

Լէոնարտո Տա Վինչի (1452-1519): Ահա աղմկալից սկիզբը նրա կեանքի. ծնուել է, այո, Ֆլորենցիայում, բայց եղել է ոչ օրինական զաւակը իր հօր: Հայրը երիտասարդութեան ժամանակ կապուած է եղել մի գիւղացի աղջկայ հետ, արտակարգ գեղեցիկ, եւ նրանից էլ ծնւում է հասա այս տղան՝ Լէոնարտոն: Ասում են, որ Լէոնարտոն երիտասարդութեան ժամանակ շատ է եղել գեղեցիկ, յար եւ նման իր գեղեցկուհի մօրը: Բայց յետոյ ունենում է երեք... Խորթ մայր, որովհետեւ հայրը իրար ետեւից ամուսնանում է երեք անգամ... Տխուր հեռանկար Լէոնարտոյի համար: Բայց տեղի է ունենում առաջին անակնկալը. բոլոր երեք խորթ մայրերն էլ անչափ են սիրել Լէոնարտոյին, դէ շատ էր գեղեցիկ, շատ էր խելօք, շատ էր մարդամօտ, ինչպէս չսիրել...

Բարդ ընթացք ստացաւ նրա կեանքը, ոչ յալոյդ: Պատճառները շատ էին, բայց ամենահիմնական դա էր՝ շատ էր խելօք ու շատ ընդունակ: Եւ ամենասարտափելին՝ շատ էր լայն շրջանակը նրա հետաքրքրութիւններին: Այո, մատիտը, ածուխը շուտ վերցրեց ձեռքը, եւ կարծես նկարել սկսել էր դեռ չծնուած, ինչ նկարում էր ստացում էր, հեշտութեամբ: Բայց եւ տարուեց գիտութեանը, հրապուրուեց արհեստագիտութեամբ: Երբ չէր նկարում, նրա ձեռքերը ինչ-որ բան էին սարքում, եւ կամ կարդում էր գրքեր արուեստի հետ ոչ մի կապ չունեցող: Հրապուրուածութեան աստիճանը այդ երկու ասպարէզներում՝ գիտութեան եւ նկարչութեան, թուում է նոյնն էր, բայց ժամանակի ընթացքում առաջինն ինչ որ աննկատելիօրէն դարձաւ գերակառոյ:

Հայրը արագ նկատեց իր որդու նկարչական հակումները եւ նրան ուսման տուեց այն ժամանակ արդէն մեծ համբաւ հանած մի ուրիշ Ֆլորենտացու՝ Վեռոքքիոյին. եւ այստեղ նա, պատանի Լէոնարտոն, սկսում է անել իր առաջին քայլերը նկարչութեան: Ծուռով հասնում է ինքնուրոյն նկարներ ստեղծելու մակարդակին: Թատմութիւն է եղել, բանաստեղծական շունչ նրա սկզբնական շրջանի գործերում: Նա ուսումնասիրում է մարդու մարմինը, հեռանկարի սկզբունքները, ճիշդ նկարելու քեքցիլը, բնութիւնը նաեւ: Որոշ ժամանակ հրապուրուում է եւ քանդակագործութեամբ: Այդպէս, մինչեւ Մետիչինների տունը ընկնելը, բայց ոչ որպէս նկարչի այլ որպէս գիտնորական ճարտարագէտ... Դա կարծէ տեսում, ու այդ պահից էլ սկսում է նրա «ցրման» շրջանը, երբ զբաղւում է ամէն ինչով, երբեմն-երբեմն վերադառնալով նկարչութեանը...

ԳՐ. ԳՈՒՐԳԱԴԵԱՆ (Շար.)

# Միտքի փոփոխումը Լուսինյանում

## ՆԱԽԱԳԱՀ ՊՈՒՇԻ ԳԱՂՏՆԻ ԶԷՆՔԸ՝ ԷԼՄՈՆ

ԻՐԱՔԻ ՄԵՋ ԵՄԵՐՈՐԵՆ ԶԻՆՈՒԲԱԾ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԶԵՆ ՕԳՆԵՐ ԲԱՐԵԿԱՍՆԵՐ ԶԱՇԵԼՈՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՃԵԱՐԻՍ ՏԱՐԱԾԵԻՆ: ԵՆԵՏԵՄԲԱՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԸ ԶԻՆՈՒՈՐԱԳՐԵՆ «ՍԻՍԵՅՍ ՍԹՐԻԹ»-Ի ՓԱՓՈՒԿ ԵՒ ՓԵՏՐԱՒՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵ ԸԱԿԱԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ԴԵՍ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՈՂ ԽԱՄԱՃԻԿՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Ամերիկեան բանակը, որ մասամբ կը հովանաւորէ պատկերասփիւռի «Սիսէյմ սթրիթ» մանկական յայտագիրը, վստահաբար կը սիրէ զայն, մանաւանդ՝ անոր «Ա. Օ. Քէյ.» բառերը կրկնող երաժշտութիւնը:

Ամերիկացի հոգեբաններ իրաքցի պատերազմի գերիներուն պարտադրած են խլացնող ձայնով անդադար լսել այս երաժշտութիւնը՝ անոնց դիմադրականութիւնը տկարացնելու եւ զանոնք հարցաքննութեան պատրաստելու համար:

Այս իրողութիւնը կը հակասէ 1969ին իր առաջին պատկերասփռումէն ի վեր յայտագրիին դերակատարութեան՝ նախադպրոցական տարիքի մանուկներուն կեանքին մէջ: Պիլ Պրոտի, էյմօն-ժի եւ միսթըր Սնաֆըլդիակուսի նման խամաճիկներու համբաւը մրտտելով՝ ամերիկացի զինուորները հաւանաբար նաեւ խորտակած են աւելի նուրբ ծրագիր մը, զոր Սպիտակ Տան պատասխանատուները յղացած են:

Յայտագիրը, որ արդէն կը պատկերասփռուի աւելի քան 120 երկիրներու մէջ, արժանացած է Ամերիկայի իշխանութիւններուն գնահատանքին, ինչպէս նաեւ՝ ամերիկեան մշակոյթին դէմ ստեղծուած տրամադրութիւնները շրջելու գործին լծուած պետական պատասխանատուներու զօրակցութեան:

Միացեալ Նահանգներու հանրային դիւանագիտութեան պետական կառոյցին պատասխանատուն՝ Շարլոթ Պիրզ ամերիկեան Մերակոյտի մէկ յանձնախումբը զգուշացուցած է՝ ըսելով. «Մարդիկ, որոնց հետ պէտք է երկխօսու-



Միացեալ Նահանգներու սկզբնատառերը կ'երեւակայէ՞ք, երբ կը տեսնէք «Սիսէյմ սթրիթ»-ի խամաճիկները:

թեան սկսինք, նոյնիսկ հիմնական բաներ չեն գիտեր մեր մասին: Անոնք սորված են վստահութիւն չընծայել մեր իւրաքանչիւր նպատակին: Նման աղաւաղումներ անգիտութեան հետ շահախուճած՝ մահացու վտանգ կը սպառնան: Հասարակաց արժէքներ մատնանշելը հիւանդութիւնը կանխելու լաւագոյն միջոցն է»:

Սակայն ի՞նչպէս յանձնարարել «դեղը» եւ նոյնիսկ դժգոյ մը շաքարով տալ զայն: Պիրզի համաձայն, «բանակ մը կայ, որ պատրաստ է աշխարհը բարեկամացնելու Միացեալ Նահանգներուն հետ»:

Իսկ որո՞նք են այս բանակին առաջնորդները. Պէրթ, Էրնի եւ Օսթար տը կրաուէ:

Պիրզ կ'ըսէ, թէ «ապշած» է ի տես 2000էն ի վեր Եգիպտոսի մէջ պատկերասփռուող «Սիսէյմ սթրիթ»-ի մէկ տարբերակին, որ կը պատրաստուի ամերիկեան գործակցութեամբ: «Մանուկներ կ'պատեն պատաստին, անոնք անգլերէն կը սորվին, ինչպէս նաեւ կը ծանօթանան ամերիկեան արժէքներուն», կ'ըսէ ան:

Միացեալ Նահանգներու Միջազգային բարգաւաճումի ընկերութիւնը այժմ 6.26 միլիոն տոլար տրամադրած է «Սիսէյմ սթրիթ»-ի, որպէսզի յատուկ յայտագրերը պատրաստուին Պանկլատէի համար. երկիր մը, որ մեծ թիւով իսլամ բնակիչներ ունի:

Ամերիկացի պետական պատասխանատու մը «Տէյլի Թեթեկարաֆ» թերթին յայտնած է, թէ՛ «ծրագրին նպատակն է քաջալերել, որ մարդիկ աւելի լաւ հասկնան ամերիկեան բարոյականութիւնն ու մշակոյթը»:

### ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ԵՐԿԱՐ «ՓՈՂՈՅԸ»

Ամերիկեան «Սիսէյմ սթրիթ» մանկական յայտագիրը սկսած է պատկերասփռուիլ 1969ին: Տարիներու ընթացքին ստեղծուած են անոր տարբերակներ. «Վիյա Սեզամ», Պրազիլ, 1972: «Սեսամ շերաւ», Գերմանիա, 1973: «Ուի Սեզամ 1», Ֆրանսա, 1978: «Ուլիցա Սեզամ». Ռուսիա, 1996: «Ռեյնոլ Սուսամ, Շարի Սըմսը», Իսրայիլ եւ պաղեստինեան գրաւեալ հողեր, 1998: «Թաքլիմի Սեզամ». Հարաւային Աֆրիկ, 2000:

Յատնապէս յայտագիրը պատրաստողները չեն խուսափած ծանուցելէ այն արժէքները, որոնք կը բնորոշեն Միացեալ Նահանգները, ինչպէս՝ դրամատիրութիւնը:

Միտքի փոփոխումը կ'ըսուի ինչպէս իր անհատականութիւնները: Մերիլ Լինչի հովանաւորութիւնը, որպէսզի առեւտուրի մասին բացատրութիւններ տայ նախադպրոցական տարիքի ամերիկացի մանուկներուն: «Ուլիցա Սեզամ» ուսակական տարբերակին մէջ կ'իրոյնի օչարակ վաճառող կրպակի մը պատմութիւնը կ'օգտագործուի ցոյց տալու համար, թէ այնպիսի պետութեան մը մէջ, ուր շատեր փտած կը համարեն տարբեր տեսակի գործառնութիւններ, մէկը «կրնայ շահ ապահովել եւ միեւնոյն ատեն լաւ անձ մը ըլլալ»:

Այսուհանդերձ «Սիսէյմ սթրիթ»-ի մանուկներու յատուկ խղերու եւ աշխատասենակներու բաժանմունքը կը մերժէ ընդունիլ, թէ ընկերութեան նպատակը այսպէս կ'ոչուած ամերիկեան արժէքներ արտածելն է: Նոյնիսկ յայտագիրը Ամերիկայէն դուրս պատկերասփռելու օրէնք մը, որ բանաձեւուած է 1969ին, կ'ըսէ, թէ ոչ ամերիկեան տարբերակները պէտք է արտացոլեն գործառնութիւնները երկիրներուն բարոյական արժէքներն ու աւանդութիւնները:

«Մենք ճամբայ չենք ելած ամերիկեան կամ արեւմտեան արժէքները տարածելու: Ատիկա մեր առաքելութիւնը չէ, կ'ըսէ «Սիսէյմ սթրիթ»-ի օտար տարբերակներու բաժանմունքին բանբերը: Մենք կը քաջալերենք տիեզերական արժէքներ, ինչպէս՝ գործակցութիւն, բաժնեկցութիւն, յարգանք եւ հասկացողութիւն: Սակայն նկատի կ'ունենանք կարիքները տուեալ երկրին, ուր կը պատկերասփռուի մեր յայտագիրը: Օրինակ, Հարաւային Աֆրիկէի համար ստեղծեցինք Սիտայի տառապող նոր տիպար մը, որովհետեւ այս հիւանդութիւնը լուրջ հարց է հոն»:

Իրօք, թէ եւ Քամի խամաճիկ խանդավառութեամբ ընդունուեցաւ Հարաւային Աֆրիկէի «Թաքլիմի Սեզամ» յայտագրիին մէջ, սակայն Ամերիկայի մէջ խումբ մը հանրապետական քաղաքագէտներ այնքան վերաւարական նկատեցին անոր ամերիկեան բարոյականութեան պատկերումը, որ նամակ մը յղեցին «Սիսէյմ սթրիթ»-ի պատասխանատուներուն՝ պահանջելով, որ նմանօրինակ պատմութիւններ չներկայացուին Ամերիկայի մէջ պատկերասփռուող յայտագիրներուն մէջ:

Այսպէս կ'ոչուած «տիեզերական արժէքներ» տարածելու ճիգով «Սիսէյմ սթրիթ»-ի Նոտիա խամաճիկը, որ կ'ուզէ սատարելու կրպակի մը, բժիշկ ըլլալ, երկրպագի ուղղակիները կը քաջալերեն, որ աւելի մեծ ձգտումներ ունենան: Եգիպտացի կիներուն յաւելեալ ուժ տալու այս մտեցումը ուղղակիօրէն կ'արտացոլէ Եգիպտոսի



Քոֆի Անան կ'այցելէ «փողոցի» մը վրայ միացած ազգերու:

պետութեան հետ համաձայնաբար որդեգրուած քաղաքականութիւն մը:

Միջին Արեւելքի տարածքին այլ վայրերու մէջ «Սիսէյմ սթրիթ»-ի յայտագիրները չըջանային աւելի փշոտ հարցեր կ'արժարծեն:

Պաղեստինեալիստայի կայտագիրը պատրաստողները կը փորձեն պայքարիլ ժխտական նախատիպարներու դէմ՝ մէկտեղելով արաբ եւ հրեայ խամաճիկները եւ պատմութիւններ հիւսելով անոնց շուրջ:


Պաղեստինեան ինքիֆատան երբեմն ընդհատած է յայտագրիին պատկերասփռումը եւ պարտադրած է, որ անիկա սահմանափակէ իր ձգտումները. միեւնոյն «թաղամասին» մէջ արաբ եւ հրեայ համայնքներէն խամաճիկներու դրակցութիւնը ծիծաղելի կը թուի նոյնիսկ նախադպրոցական տարիքի մանուկներուն:

Այսուհանդերձ, այն կարճ ժամանակամիջոցին, որ պատկերասփռուեցաւ «Ռեյնոլ Սուսամ» կամ «Շարի Սըմսը» յայտագիրը, անիկա դրական ազդեցութիւն ունեցաւ արաբ եւ հրեայ մանուկներուն վրայ:

Մերիլինի համայնարանէն դասախօս մը նախան Ֆոքս կ'ըսէ, թէ մասնաւորաբար պաղեստինցի մանուկները օգտուած են իրենց մշակոյթին դրական պատկերները տեսնելով պատաստին վրայ: Ան կը բացատրէ, թէ տուեալ պայմաններուն մէջ դժուար է «լաւապէս օգտագործել գիտութիւնը», եւ թէ՛ ինք պիտի կարենար դրական այլ ազդեցութիւններ յայտնաբերել, եթէ յաւելեալ ուսումնասիրութիւններ կատարէր:

Ֆոքս կ'ըսէ, թէ «Սիսէյմ սթրիթ»ը «թերեւս պիտի չկարենայ շրջել մշակութային արժատացած նախատիպարները», սակայն անիկա հաղորդակցութեան եւ բաժնեկցումի պատմութիւններ ներկայացնելով կրնայ կանխել նման նախատիպարներու պատկերացումը, երբ երկու համայնքներէն մարդիկ իրարու կը հանդիպին:

Ասիկա կրնայ յաւելեալ թափ տալ Աֆղանիս-



Արաբներ եւ հրեաներ կրնան գոյակցիլ...

տանի եւ Հիւսիսային իրլանտայի ժողովուրդներուն նպատակաւորուած յայտագիրներու ծրագրումին: Նման յայտագիր մը արդէն կը պատրաստուի Քոսովոյի մէջ:

Հետեւաբար Միացեալ Նահանգներու պետական ներկայացուցիչները հաւանաբար կը սխալին, երբ Պիլ Պրոտի խամաճիկին առատաձեռնութիւնն ու խղճալի տարաբարապատմութիւնը կը շփոթեն գոյու ամերիկեան արժանիքներու հետ:

Նախան Ֆոքսի մէկ պաշտօնակիցը՝ Մելանի Քիլըն վերջերս նկատած է, թէ աշխարհի տարածքին մանուկներ կը բաժնան հասարակաց շաքար մը արժէքներ, որոնք առկայ կը տարբեր մշակոյթներու մէջ: «Այս յայտնաբերումը զարմանք պատճառուած է շատերուն», կ'ըսէ ան:

Երբ հարցը կը վերաբերի բաժնեկցումը, հաւասարութեան եւ արդարութեան, կը թուի, թէ բոլոր կը գտնուինք «փողոցին» նոյն կողմը:

### Պատրաստե՛ք՝ Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

### ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթացիկ գիրով (հաստատութեանց պարագային՝ անխորտակաբար պաշտօնակցան թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրաւեցնակը:

## «ԱՄԲՈՂՁԱՏԻՐԱԿԱՆ» ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱԸԱՆՍԵՐՈՒ ՄԵՋ ԶՈՒԿԱՅ ԿԻՋՆԵՆ «ՊՈՒՇ» ՊՈՒՊՐԻԿՆԵՐ՝ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԲՈՒՐ ԿԵՑՈՒՄԵՆԵՐՈՎ: ԱՆՈՆԵ ԿԸ ԵՐՈՒՄԱՅԻՆ ԶԱՅՆ ԵՒ ԿԸ ԵՄՈՒՅԵՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԻՆ: ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԳՆԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԵՄՈՒՅԵՆ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ «ԻՆՏԵՐՆԵՇՆԸԸ ԵՐՈՒՍ ԹԻՐՊԻՈՒՆ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ԿԸ ԶԱՂԿԵ ԵՐԵՒՈՅԸ

Չարեր զգուշացէ՛ք. ձի. Այ. Ճորճը այստեղ է: «Պլու Պաքս Թոյոյ» ընկերութիւնը յայտարարած է, թէ Սեպտեմբեր 15ին չու կայ պիտի իրենց նէ սահմանափակ թիւով «Էլիթ Ֆորս Էլեյթ» պուպրիկները, որոնք կը պատկերեն Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշը:

Օղաչուի աւանդական տարագով այս ճկուն կերպարը պիտի յիշեցնէ պատմական այն օրը, երբ նախագահ Պուշ էջը կատարեց Ապրահամ Լինքոլնի օղանակիքին վրայ՝ նշելով իրաքի մէջ պատերազմական գործողութիւններուն աւարտը: Թէեւ իրականութեան մէջ նախագահ Պուշ երբեք չմասնակցեցաւ պատերազմին, սակայն 30 սմ. երկարութեամբ եւ էքշընի պատրաստ այս պուպրիկը պիտի օգնէ երեւակայելու, թէ ան կրնար պատերազմել: Պուպրիկը կատարելապէս օժտուած է սաղաւարտով, թիւումին շիշերով, անկարգելով եւ լոյսերով. բաժնի, գորս նախագահ Պուշ կը կրէր, երբ էջը կատարեց օղանակիքին վրայ:

Միայն 39.99 տոլարի կարելի է ունենալ «Ճորճ Պուշ» զինուոր մը: Ձեր թաղամասին մէջ առաջին անգամ դուք գնեցէք պատմութեան մէկ մասնիկը, որ կ'ոգեկոչէ մարդկային ընկերութեան կործանումը:

Իսկ չէ՞ք մտածեր ամբողջ շարքը գնելու մասին:

Պաֆ Ճորճը էքշընի պատրաստ բարեձեւ պուպրիկ մըն է, որ կը հպարտանայ մէկ վայրկեանի մէջ սրտի 45 գարկերով եւ մարմնի ճարպի հախաճեղի համեմատութեամբ: Երբ ան կ'ըսէ՝ «Եկէ՛ք՝ մարզանք ընենք», ան լուրջ է: Թէեւ բազմաթիւ ամերիկացիներ այս նեղ օրերուն մարզանք ընելու ժամանակ չունին, Պաֆ Ճորճ գիտէ առաջնահերթութիւններ ճշդել, երբեք չի զեղչեր մարզանքի ժամերը եւ յաջողած է զօրացնել իր մկանները այնպիսի ժամանակներուն, երբ իր երկիրը ազգային հարցեր կը դիմադրաւէ: Ասիկա կը կոչուի «նուերում»:

Պուպրիկին պատկանող ճակատի կապը, երաժշտութիւն ունկնդրելու գործիքն ու մարզանքի հեծանիւրը առանձին կը վաճառուին:

Յանտրեյցըը ռիփապլիքըն Ճորճ կամ դրամ հաւաքող հանրապետական Ճորճը սահմաններ չի ճանչնար, երբ հարցը կը վերաբերի տոլար շահելու: Մանուկներ հաճոյք պիտի զգան ամերիկեան խոշոր թիւերումներ թիւմերով անոր դատարկ վրա թիւին մէջ, հաւաստով, որ իրենց դրամը ապահով պիտի պահուի հոն: Սակարանային շուկային անկումին պատճառով մեծ գումարներ կորսնցուցած էք: Նիւթական բացերը մտահոգութիւն կը պատճառեն ձեզի: Առայժմ մոռ-

ցէք ձեր տնտեսական դժուարութիւնները եւ հիացէք էքշընի պատրաստ եւ դրամ հաւաքող Պուշին վրայ, որ կը շարունակէ շահախնդրի դրամ հաւաքելու քաղաքական մրցանիշները: Տուրք չէք վճարել, եթէ այս պուպրիկին հետ գնէք Ճորճ Պուշի այլ կերպար մը:

Քոմանտո Ճորճ ժամանցի պահու. բնութեան մէջ, Սպիտակ Տան մէջ, թէ կ'ըլլի դաշտին վրայ այս պուպրիկը այնքան ալ չի նմանի էքշընի հերոսի եւ նոր բնորոշում մը կու տայ «Հանգիստ» բառին: Մինչ գործազրկութեան համեմատութիւնը երկիրը կը բարձրանայ, 44 միլիոն ամերիկացիներ գուրկ են առողջապահական ապահովագրութեան, եւ նոյնիսկ ամէնէն զգաստ ամերիկացիները ժամանակ կը տրամադրեն զամանակը:

Նազան տեսակի վիրակապեր գնելու, այս պուպրիկը իր «ամէն ինչ լաւ է» մօտեցումով մտածել կու տայ, թէ արդեօք խուճապը ի՞նչ բանի համար է: Մոռցէ՛ք Սատտոմ Հիւսէյնը: Ուսամայի մակնուրը ի՞նչ էր...: Չանգուածային ոչնչացման գէնքը: Քիչ մը Քոմանտո Ճորճին հետ հանգստացէք ձեր բանակավայրին մէջ, որովհետեւ, երբ արձակուրդի ձեր երթալը կը դժուարանայ, արձակուրդի կրնան երթալ միայն գործողները: Քոմանտո Ճորճին քառապոյզի գլխարկը, կ'ըլլի սայլն ու փոխադրակառքը առանձին կը վաճառուին:

Ձեքի կամ շաղակրատ նախագահ Ճորճը. «Մեր մանուկները բան մը կը սորվին»: Այսուհետեւ այն, պիտի սորվին: Երբեք սխալ մի՛ գնահատէք լեզուի կարեւորութիւնն ու հաճոյքի ժամերը, եւ ձեր ընտանիքը առիթը պիտի ունենայ նոր բառեր սորվելու լարուող ու խօսող այս պուպրիկին շնորհիւ: Գուրքը, ան կ'ըսէ՝ «նիւթը», ան կ'ըսէ՝ «նուերում»: Շաղակրատ Ճորճը այնքան չփոփոխուի պիտի մտանք ձեզ, որ դուք եւս պիտի սկսիք հարց տալ, թէ արդեօք ո՞ր բառերը իրական են եւ ո՞ր բառերը՝ պարզապէս այս անգույնի պուպրիկին երեւակայութեան պտուղը: Բառարան մը եւ ենչ համայնարանէն վկայական մը առանձին կը վաճառուին:

Տեքի պուպրիկը Տիւք Չէյնին է: Չայն շինողները ստիպուած էին միայն իրենց յիշողութեան անգահինի Ամերիկայի փոխ նախագահին յար եւ նման պատկերներ ստեղծելու համար: Էքշընի պատրաստ այս պուպրիկը զրեթէ անգտանելի է, սակայն անոնք, որոնք կը յանդգնին պատիւ ընդ-յատակեայ վայրերու մէջ, թերեւս կրնան հանդիպիլ հաւաքածոյի յատուկ այս հազուադէպ իրին: Պուպրիկին հետ կը վաճառուին յաւելեալ բարդեր:

**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**



**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՅՈՒՅԱՐԱՐԱՐ՝ «ԱՐԻՍ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵՆՔ, Բ. ՅԱՐԿ**  
 ԵՄՈ. (02) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**



**ՉԱԿԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ՉՈՍ)**

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

ՉՈՍի Ուսանողական արևելուծի գրասենյակը սիրով կ'ընդունի այն հայ աշակերտները, որոնք կը փափաքեն յաւելեալ տեղեկութիւններ եւ ցուցմունքներ ստանալ համալսարանական մուտքի (քննութիւններ եւ այլ), մասնագիտութիւններու եւ կրթանախնդրու մասին:

Շտաբըրըրուողները կրնան դիմել Չաւարեան Ուսանողական Միութեան կեդրոն, ամէն Գորեքշաբթի ժամը 5:30էն 8:30:

Հասցէ՝ Պուրճ Համուտ, Արաքս փողոց, Երեւանեան կեդրոն, 4րդ յարկ  
 Հեռ. 01 / 240167

**Ս. ԱԳՆԷՍ**

**ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆ**  
 ՀԵՌ. 01/261139 ՊՈՒՐՃ-ՀԱՍՈՒՏ

2003-2004 դպրոցական տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները նախկին եւ նոր աշակերտներու համար կը սկսին Երկուշաբթի, 8 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ 13:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Կրթական յանձնախումբս կրթանախնդրու դիւրութիւններ պիտի ընծայէ յաջողակ սաներու, միւթական դժուարութիւն ունեցող աշակերտներու եւ մանաւանդ մանկապարտեզի փոքրիկներուն համար:

Վերաքննութիւնները տեղի կ'ունենան՝ Գորեքշաբթի, 17 Սեպտեմբեր, առաւօտեան ժամը 9:00ին:

Քննութիւններու արդիւնքները՝ Ուրբաթ, 19 Սեպտեմբեր, առաւօտեան ժամը 11:00ին:

**ՎԵՐԱՄՈՒՏ**

- Պրըզիտ՝ Է. Ը. Թ դասարանները՝ Գորեքշաբթի, 24 Սեպտեմբեր
- Նախակրթարան՝ Երկուշաբթի, 29 Սեպտեմբեր
- Մանկապարտեզ՝ Երկուշաբթի, 6 Ոկտեմբեր

**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԳՆԷՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

**www.hamazkayin.com**

**☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆**

**ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)**  
 Չօրաւոր կամք պետք է ունենաք այսօր՝ դիմադրելու համար սուղնոց գնումի մը կամ այլ կարգի հարցի մը, որուն նկատմամբ մեծ փափաք ունիք: Այսօր համբերութիւն կը պարտադրուի ձեզի:

**ՅՈՒԻ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
 Այսօր պիտի ունենաք մէկ ու միակ բաղձնք մը եւ նախընտրութիւն մը. գոհացում տալ ձեր փափաքներուն: Մարդ կրնայ ինքնիրեն ծառայել եւ իր փափաքները իրագործել իր անձնական միջոցներով միայն:

**ԵՐԿՈՒՇԱԲԹ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
 Այսօր վազ վզուքի օր մը պիտի ըլլայ ձեզի համար: Մէկ վայրկեան հանգիստի պահ պիտի չունենաք: Պիտի իրագործէք կարելորդ աշխատանքներ: Օրը արդիւնաւետ է:

**ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
 Ձեր գործակիցները գործի մղեցէք եւ համախմբուեցէք ծրագրի մը իրագործման համար: Շատ գոհ պիտի մնաք այս համակարգումէն: Օրը պիտի անցնի ուրախ:

**ԱՌԻԹ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
 Ձեր գործին ձեր կ'ազդէ ձեր ջղային դրութեան վրայ՝ ձեզ վերածելով ջղագրգիռ անձի մը: Նոյնիսկ տեղ մէջ պիտի ըլլաք ջղային: Ուրեմն գացէք ուրիշ տեղ մը հանգստանալու:

**ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
 Աստղերը նպաստաւոր դիրքի վրայ են ուսումնական կեանքի մէջ եղողներուն համար: Ուսուցիչները եւ դասախօսները պիտի վերագտնեն իրենց սրբազան հուրը, որ գիրքնք կ'ողբուրէ տուեալ ժամուն:

**ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
 Ձեր աշխատանքները կամ ծրագրերներու իրագործումը պիտի մնան մեռելախիտ վրայ, որովհետեւ դուք եւ ձեր խօսակիցները մէկ բայլ առջեւ չէք երթար տուեալ հարցը լուծելու:

**ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
 Պիտի ստորագրէք համաձայնագիր մը ձեր պաշտօնին վերաբերեալ գործի մը համար: Ուշադիր եղէք նոյն առեւ համաձայնագրին բոլոր կետերը լաւ կարգալու:

**ԱՂԵՂՆԱԻՌ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
 Աշխատանքի մարմնի մէջ պիտի ըլլաք թիչ մը թոյլ, որ պիտի ազդէ ձեր գործին: Ձեր գործակիցները դժգոհ պիտի մնան ձեր վերաբերումէն: Ուրեմն մի վշտանաք, երբ անոնք ձեզի երես դարձնեն այսօր:

**ԱՅՄԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
 Ձեր գաւակները կամ ձեր գործակիցները շատ երկ պիտի բափեն ձեզի օգտակար ըլլալու համար: Անոնք կ'ողբեն հանելի մթնոլորտ ստեղծել ձեր շուրջը: Այսպիսով խղաղութիւն պիտի տիրէ ձեր ընտանեկան յարկին տակ:

**ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
 Ձեր անկախ կեանք մը վարելու կեցուածքը հանելի չի բուրբ ամենու: Ձեր ընտանիքը կը փափաքի յանախ լուրեր ստանալ ձեզմէ: Ուրեմն կապ պահեցէք ձեր հարազատներուն հետ:

**ՋՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
 Եթէ ուսանող եք, մի վախճաք, որ ամէն ինչ մոռցած էք անցնող Յունիսի տարեփակէն ետք: Մի՛ վախճաք, շուտով պիտի վերագտնէք ձեր բնական ուշիմութիւնը:

**«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԵՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ**

Բոլոր անոնք, որոնք կը փափաքեն «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պետք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՁԵԻ ԵՐԿՈՒՅԵԱՆ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՋԴԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

**ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5540**  
 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ԵՐԿՈՒՅԵԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՑ
1. Ծանր կշտամբանք:	1. Մահացու հիւանդութիւն - Լուսաւորիչի հայրը:
2. Վէճի կունակ - Մեծ:	2. Մարտունիի գիւղերէն - Հնդկահաւ:
3. Փեսային եղբայրը՝ հարսին նկատմամբ - Հերձուած:	3. Մարտունիի գիւղերէն - Օղ:
4. Նզովից արմատ:	4. Ածիլի - Նոյի որդիներէն:
5. Դէմք - Նոյի գիրերը:	5. Աղամանդ - 100 մ2 - Յուսկան ածական:
6. Մաքրողական տեղեկներով բոյ - Շէն:	6. Մանձարձակ:
7. Մ. Գրային նահապետ - Բարձր ծառատեսակ:	7. Տաղերգակ - Լեցուն:
8. Արական օտար անուն - Ուռնակ:	8. Կողպուտ - Շիլ:
9. Կբիլ - Արուրենէն:	9. Օսբարակիր Ֆիլմ (1982) - Սիգանք:
10. Իբր դեղ գործածող բուսական հիւթ մը:	10. Դրկլիտաւոր-Պորճիկ:

**ԹԻՒ 5539**

**ԽԱՉԲԱՌԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**

1	Խ	Ս	Ե	Ր	Ա	Խ	Ե	Ս
2	Լ	Ի	Ս	Ս	Ս	Ս	Ր	Լ
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

**ՕՐԱՏԵՏՐ**

**ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՐԱՐԱՐ / ՉԲՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ**

**ՊԵՅՐՈՒԹ ՓՈՂՈՅԻ ՓԱՌԱՏՕՆԸ ԹԱՏՐՈՂ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԻՐ ԵՐԹԸ**


Պէյրուքի փողոցի փառատօնը իր պարային, երաժշտական եւ մանաւանդ թատերական ելոյթներով անցնող երկու շաբաթներուն ընթացքին մեծ խանդավառութիւն ստեղծեց իր շուրջը: Յաջողական հինգ շաբաթներու վերապահած է եւս այլ թատերախաղ մը, որուն փառատօնը, որուն բոլոր յայտագիրները անվճար կերպով բաց են հանրութեան համար, անցնող շաբաթավերջին եւս հանդիսատեսին ներկայացաւ «Սաաթ հապ» խորագրեալ թատերախաղով:

Այս շաբաթունային իր յայտագիրին մէջ Պէյրուքի փողոցի փառատօնը վերապահած է եւս այլ թատերախաղ մը, որուն փառատօնը, որուն բոլոր յայտագիրները անվճար կերպով բաց են հանրութեան համար, անցնող շաբաթավերջին եւս հանդիսատեսին ներկայացաւ «Սաաթ հապ» խորագրեալ թատերախաղով:

Այս շաբաթունային իր յայտագիրին մէջ Պէյրուքի փողոցի փառատօնը վերապահած է եւս այլ թատերախաղ մը, որուն փառատօնը, որուն բոլոր յայտագիրները անվճար կերպով բաց են հանրութեան համար, անցնող շաբաթավերջին եւս հանդիսատեսին ներկայացաւ «Սաաթ հապ» խորագրեալ թատերախաղով:

Այս շաբաթունային իր յայտագիրին մէջ Պէյրուքի փողոցի փառատօնը վերապահած է եւս այլ թատերախաղ մը, որուն փառատօնը, որուն բոլոր յայտագիրները անվճար կերպով բաց են հանրութեան համար, անցնող շաբաթավերջին եւս հանդիսատեսին ներկայացաւ «Սաաթ հապ» խորագրեալ թատերախաղով:

**ՄԱՍՈՐ**



Յարգարման արուեստի ցուցահանդէս՝ «Ման-ժեօն տեսան», ֆրանսական Մշակութային կեդրոն, մինչեւ 3 Հոկտեմբեր:

Պէյրուքի փողոցի փառատօնը թատերախաղ՝ «Ուա Բարնո», ժամը 18:30ին, Նրժմէ հրապարակ:

Թատրոն՝ «Յիլ Սամ», ժամը 20:30ին, «Ալ Մա-տինա» թատերաբան, մինչեւ 27 Սեպտեմբեր:

Նկարչական ցուցահանդէս Նազիր Իսմայիլի գործերը, «Աժիլ» արուեստի ցուցարան, մինչեւ 21 Սեպտեմբեր:

Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Վի-գաթ», «Ժանիմ Ռուպէյ» ցուցարան, մինչեւ 26 Սեպտեմբեր:

Լուսանկարչական ցուցահանդէս՝ Ռիչի Նազ-գալի գործերը, «Ջինք» ցուցարան:

Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ լիբանանցի երիտասարդ գեղանկարիչներու գործերը, «Շահին» ցուցարան եւ «Ֆենիսիա» պանդոկ, մինչեւ 15 Սեպտեմբեր:

Գեղանկարչութեան եւ քանդակագործութեան սիմփոզիում, Ժուլիէի հին շուկայ, մինչեւ 20 Սեպտեմբեր:

**ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ**  
 15 Սեպտեմբեր 1953

**ՓԱՌԻՋԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

**ԵՐԵՔ ԴԻԱԿ, ԵՐԿՈՒ ՎԻՐԱԻՌ**

Ինչպէս գրած էինք առջի օր, հայ երիտասարդ մը՝ Սիլվէն Կիւմշեան, իր ֆրանսացի գործընկեր սպաննած, նշանածը վիրաւորած եւ անձնասպան եղած էր փարիզեան արուարձանի մը մէջ, Քրուազի Սիւր Սէն:

Ոստիկանութիւնը երեւան հանած է այլապէս ծանրակշիռ դէպք մը. անձնասպան երիտասարդ մէկ օր առաջ սպաննած էր իր հայրը եւ ծանրապէս վիրաւորած՝ մեծ մայրը: Սպաննալիս եւ վիրաւորին մարմինները երեւան հանուեցան հետեւեալ պարագաներուն մէջ.

Երեքշաբթի առտու ոչ ոք գարմացաւ, երբ տղուն հայրը՝ գոհարավաճառ Արամ Կիւմշեան եւ մեծ մայրը Պէաթրիս, չեղեցան, որովհետեւ իրենց բնակարանին ռատիոն կը բացէր: Չորեքշաբթի առտու ժամը 9ին ընտանիքին մէկ բարեկամը՝ Մուրաֆեան դուռը կը գարնէ, բայց պատասխան չի ստանար: Եւ սակայն ռատիոն կը բացէր: Մտահոգութեան

մատուցելով՝ լուր կու տայ ոստիկանութեան: Այդ միջոցին ոստիկանութեան տեսուչը՝ Ժիոն կը պատրաստուէր անձնասպան երիտասարդին ծնողը քննութեան ենթարկելու: Անմիջապէս անոնք բնակարանը գնաց Մուրաֆեանի հետ: Դուռը ներսէն գոցուած էր, իսկ պատահականօրէն փեղկերը բաց էին: Եւ ռատիոն միշտ կը բացէր: Ոստիկանները պատէ մը կապցնելով ներս մտան: Կիւմշեանի մուտքը շախախտուած էր, իսկ մարամիճը՝ պարզ, ինչ որ կը նշանակէր, թէ սպանութիւնը տեղի ունեցած է մօտ 24 ժամ առաջ: Քիչ անցին կը հռնդար տիկին Պէաթրիս, որ գլուխէն վիրաւորուած ըլլալով՝ անմիջապէս հիւանդանոց փոխադրուեցաւ:


Կը հետեւի, թէ Սիլվէն նախ այս ոնիրները գործած, ապա, մեկուկէս ժամ ետք գացած է նշանածին տունը՝ խզման վրէժը լուծելու համար: Հայրը սպաննուած էր ծանր եւ հատու գործիքով մը, գոր ոստիկանները չեն գտած:

**ՄԱՍՈՐ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ**

1856- Պոլսոյ մէջ կը սկսի լոյս տեսնել «Սեղո» երգիծական թերթը:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### ՓՈՒԿ ՓՈՒԿ

## Հ. Մ. Ը. Մ.Ի ՏՂԱՔՆ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՀԱՍԱՆ ԱԲԱՐՏԱԿԱՆԻՆ, ՍԱԿԱՅՆ ՏԵՂԻ ՏՈՒԻՆ ԻՐԵՆՑ ՄՐՑԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ

Շաբաթավերջին Մոն Լա Սալի մէջ աւարտեցան Լիբանանի փինկ փոնկի տղոց եւ աղջկանց ախոյեանութեան մրցումները:

Տղոց կիսաւարտական հանգրուանին իր կատարած մրցումին, Հ. Մ. Ը. Մ.Ի մարզիկ Ռաֆայիլ Շեմեմեան մեծ իրագործում մը կատարեց, երբ ապահովեց աւարտական մրցումին իր տոմար, 4-2 արդիւնքով պարտութեան մատնելով Ալֆրետ Նաժճը: Աւարտականին, սակայն, Ռաֆայիլ 4-0 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Ռաշիտ Պրապոյէն, հանդիսացաւ փոխ ախոյեան:

Աղջկանց կիսաւարտականի մրցումներուն, Լարա Քէչէպաշեան 4-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Հ. Մ. Ը. Մ.Ի իր խմբակիցը՝ Նոնի Քէշիշեանը, ապահովեց աւարտականին իր տոմար, ուր սակայն պարտութեան Ղատա Ըլէյլաթէն՝ 4-2 արդիւնքով: Կիսաւարտականին Ղատա պարտութեան մատնեց Հ. Մ. Ը. Մ.Ի մարզիկներէն՝ Լիլա Պարիքեանը, 4-3 արդիւնքով:

Հակառակ իրենց կրած այս պարտութեան սակայն աղջիկներու ընդհանուր դասաւորման մէջ Լարա տակաւին կը շարունակէ մնալ առաջին: Երկրորդ դիրքը կը գրաւէ Լիլա, մինչ երրորդ դիրքին վրայ կը մնայ Ղատա:

Շաբաթ օր տեղի ունեցաւ նաեւ խառն զոյգի աւարտական մրցումը՝ Լարա Քէչէպաշեան / Ռաշիտ Պրապո - Ժոզէֆ Շալիուպ / Ռուպա Պրապոյէն զոյգերուն միջեւ: Անիկա վերջ գտաւ Լարա-Ռաշիտ զոյգին յաղթանակով՝ 3-1:

Այսպիսով, Լիբանանի փինկ փոնկի ախոյեանութեան մրցաշարքին աւարտին, Հ. Մ. Ը. Մ. շահեցաւ չորս բաժակ: Լարա Քէչէպաշեան եւ Լիլա Պարիքեան շահեցան զոյգ աղջկանց ախոյեանութիւնը, իսկ Լարա, Ռաշիտ Պրապոյի հետ շահեցաւ խառն զոյգի տիտղոսը:

Անցեալ շաբաթ, Հ. Մ. Ը. Մ. շահեցաւ երկու բաժակ, երբ 1986-1987 դասակարգին մէջ Մալէք Թաուիլ հանդիսացաւ ախոյեան, իսկ 1992-1993 դասակարգին մէջ, Աւո Մունշողեան իրագործեց նոյնը:

● **ՅՅՄՕՐ**՝ Երկուշաբթի, Լիբանանէն Քարա կը մեկնին Հ. Մ. Ը. Մ.Ի երկու մարզիկներ՝ Լարա Քէչէպաշեան եւ Լիլա Պարիքեան, որոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Արեւմտեան Ասիոյ աղջկանց զոյգի մրցումներուն: Լիբանանի թիւ 1 եւ 2 մարզիկները նկատուող՝ Լարա եւ Լիլա, որոնք իրենց Լիբանանի փինկ փոնկի աղջկանց ապագային խումբը պիտի ներկայացնեն, հինգ օրուան ընթացքին զոյգի մրցումներ պիտի կատարեն, ետք այլ երկիրներ ներկայացնող մարզիկներուն հետ: Այդ ութ երկիրներու 16 մարզիկներէն յաւաքոյնք միայն իր մասնակցութիւնը պիտի բերէ յառաջիկայ տարի Աթէնքի մէջ տեղի ունենալիք 2004ի Ողիմպիականի մրցումներուն:

### ՖՈՐՄԱՒԵՐ 1

## ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԸՐ՝ ՄՈՆԶԱՅԻ ՅԱՂԹԱԿԱՆԸ



Ուիլիըմսի վարորդ Ռալֆ Շումպերը: Սակայն երկուսն աւելի քան փրիին անոր չմասնակցիլը պատճառ դարձաւ, որ ան դուրս մնայ այդ պայքարէն: Ուրբաթ օր տեղի ունեցած փորձերուն Ռալֆ ինքզինք լաւ չէր վզար, ինչու էւ աբար յայտնեց, որ պիտի չկարե-

նայ իր մասնակցութիւնը բերել: Սպանացի Մարք ժընէ, որ փոխարինեց Ռալֆը, յաջողեցաւ հինգերորդ դիրքը գրաւել եւ չորս կէտ ապահովել Ուիլիըմսի: Եղանակի 15րդ եւ նախավերջին հանգրուանի կրան փրիին տեղի կ'ունենայ 28 Սեպտեմբերին, Ինտիանափոլիսի մէջ (Մ. Ն.), իսկ վերջին հանգրուանի մրցումը՝ 12 Հոկտեմբերին, Սուպուրայի մէջ (Ճափոն):

Ֆորմուլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 14րդ կրան փրիին, որ տեղի ունեցաւ երէկ Մոնպալի մէջ (Իտալիա), վերջ գտաւ հինգ անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած Ֆեռնանդո Ալոնսոյի վարորդ Միքայէլ Շումպերի յաղթանակով, որ այսպիսով արձանագրեց այս եղանակի իր հինգերորդ յաղթանակը:



- Ստորեւ՝ երկուսն աւելի քան փրիին արդիւնքները.
- 1.- Միքայէլ Շումպեր (Գերմանիա) Ֆեռարի 1 ժամ 14' 19"
  - 2.- Խուան Փալլո Մոնթոյա (Քոլումբիա) Ռիլիըմս 5" ու 2
  - 3.- Ռուպէն Պարիքեյլո (Պրապոյի) Ֆեռարի 11" ու 2
  - 4.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա) Մաքլարըն 12" ու 2
  - 5.- Մարք ժընէ (Սպանիա) Ուիլիըմս 27" ու 2
  - 6.- Ժաք Վիլլընթով (Քանադա) ՊԱՐ մէկ լէֆ ու 2
  - 7.- Մարք Ուեպըր (Աւստրալիա) Ժակուար նոյնը
  - 8.- Ֆեռնանտո Ալոնսո (Սպանիա) Արնո նոյնը

- Ստորեւ՝ վարորդներուն ընդհանուր դասաւորումը.
- | ԿԵՏ                                   | ՎԵՏ |
|---------------------------------------|-----|
| 1.- Միքայէլ Շումպեր (Գերմանիա)        | 82  |
| 2.- Խուան Փալլո Մոնթոյա (Քոլումբիա)   | 79  |
| 3.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա)          | 75  |
| 4.- Ռալֆ Շումպեր (Գերմանիա)           | 58  |
| 5.- Ռուպէն Պարիքեյլո (Պրապոյի)        | 55  |
| 6.- Ֆեռնանտո Ալոնսո (Սպանիա)          | 55  |
| 7.- Տէյվիտ Քոլթարտ (Քրիտանիա)         | 45  |
| 8.- Եստիտ Թրոյի (Իտալիա)              | 24  |
| 9.- Մարք Ուեպըր (Աւստրալիա)           | 17  |
| 10.- Ենսոն Պարըն (Քրիտանիա)           | 12  |
| 11.- Ճիանքարլո Ֆիլիքելլա (Իտալիա)     | 10  |
| 12.- Քրիսթիանո Տա Մարթա (Պրապոյի)     | 8   |
| 13.- Հայնց-Հերլոյտ Ֆրենցըն (Գերմանիա) | 7   |
| 14.- Օլիվիէ Փանիս (Ֆրանսա)            | 6   |
| 15.- Ժաք Վիլլընթով (Քանադա)           | 6   |
| 16.- Մարք ժընէ (Սպանիա)               | 4   |
| 17.- Նիք Հիտֆելտ (Գերմանիա)           | 2   |
| 18.- Ռալֆ Ֆիլիքըն (Քրիտանիա)          | 1   |

- Խումբներու դասաւորում.
- | ԿԵՏ          | ՎԵՏ |
|--------------|-----|
| 1.- Ուիլիըմս | 141 |
| 2.- Ֆեռարի   | 137 |
| 3.- Մաքլարըն | 120 |
| 4.- Արնո     | 79  |
| 5.- ՊԱՐ      | 18  |
| 6.- Ժակուար  | 17  |
| 7.- Թոյոթա   | 14  |
| 8.- Ճորտըն   | 11  |
| 9.- Սաուպըր  | 9   |

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Սարի Զեմտիթեանի մահուան առիթով, ԶԱՄԼԻ տնօրէնութիւնը եւ պաշտօնէն ընկերութիւնը 250,000 Լ.Ո. ԶԱՄԼԻն:

### ԾԱԽՈՒ ԾԵՆԸ

● Երկարկամի չէնք մը, իւրաքանչիւր յարկաբաժին երկու անգամեան, հիւրաբար, եւ յարակից մասեր: Մար Եուսէֆ Եկեղեցոյ մօտ: Հեռ. 01/251261, 03/538530 եւ 03/574781:

### ԲԱՆՏԱՒՈՐՈՒՄ

Տեր եւ տիկին Կառէ եւ Զարմիկ Թերկէլեաններ  
բախտաւորուած են աղջիկ գաւակով մը՝  
**ԲԱԼԻԿ**  
12 Սեպտեմբեր, 2003

### ԱԹԵԹԻՉՍ

## ՌԷՏՔԼԻՖԻ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇԸ

Բրիտանացի աթլէթ Փաուլա Ռէտքլիֆ երէկ Լոնտոնի (Քրիտանիա) «Հայտ Փարք»-ի մէջ տեղի ունեցած աղջկանց հինգ հապար մեթր վազքի մրցումներուն աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, երբ արձանագրեց 14 վայրկեան եւ 51 երկվայրկեան արդիւնք մը, նախկին մրցանիշը (14' 54") կը պատկանէր ամերիկացի Տիւնա Տրոսիին, որ հաստատուած էր անցեալ տարի, Քալիֆորնիոյ մէջ:



Վիրաւոր Ռէտքլիֆ, անցեալ ամիս Փարիզի մէջ (Ֆրանսա) տեղի ունեցած աշխարհի ախոյեանութեան մրցումներուն իր մասնակցութիւնը չբերաւ:

## ԽԱՐՐՈՒԺ՝ ՏԱՐՈՒԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԱԹԼԷԹԸ

Յաջորդաբար երրորդ տարին ըլլալով մարտի 9-ի Հիշած Խարրուծ ընտրութեան տարուան լաւագոյն աթլէթը, հակառակ անոր որ ան անցեալ շաբաթ տեղի ունեցած աշխարհի աթլէթիկ մրցումներուն իր մասնակցութիւնը չբերաւ: 2001ին եւ 2002ին նոյն այս տիտղոսին տիրացած մարտի 9-ի, նկատի ունենալով որ բարաբար կէտերը ապահոված էր այդ տիտղոսը իր մօտ պահելու, ինքզինք յոգնած ըլլալով չուրեք այդ աւարտականի մրցումներուն մասնակցիլ:



Աղջկանց տիտղոսին տիրացաւ հարաւային ափրիկեցի Հեսթրի Քոլլեք, որ այսպիսով դարձաւ առաջին ափրիկեցի աղջիկ աթլէթը, որ Աթլէթիկ միջազգային ֆետերասիոնին կողմէ կ'ընտրուի լաւագոյն մարզիկը: Այդ տիտղոսին բացի, ան տացաւ նաեւ հարիւր հապար ամերիկեան տոյարի չէք մը: Նոյնքան գումար ստացաւ նաեւ Հիշած Խարրուծ:

### ԿԵՐԱՍՈՒՏ

**Ս. ԽԱՆՍՄԻՐԵՆՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**  
(Ֆանար, հեռ. 891545)

- 1.- 2003-2004 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ 26 Սեպտեմբեր 2003, ամէն օր բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, ժամը 8:30էն 12:30:
- 2.- Վերաքննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ ժամանակացոյցով.  
Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր 2003 Թիւ  
Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003 Արաբերէն  
Չորեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2003 Անգլ. եւ Շայլեոյ  
Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր 2003 Գիտ. եւ Շյո. Պոստ.

Վերաքննութիւնները տեղի կ'ունենան առաւօտեան ժամը 9:00ին:

- 3.- Օթորաթի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:
- 4.- Յաւելեալ մանրամասնութեանց համար դիմել տնօրէնութեան:

**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ**

### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՆՏՐՈՊԵԱՆ ԲԱՐՉԱՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

### ԿԵՐԱՍՈՒՏ

2003 - 2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

Սկսած են նախկին եւ նորեկ աշակերտներու արձանագրութիւնները՝ բոլոր դասարաններուն համար, շաբաթուան բոլոր օրերը (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն), առաւօտեան ժամը 9:00էն 1:00, կեսօրէ տեղ ժամը 5:00էն 8:00:

Մուտքի քննութիւններ՝  
Հինգշաբթի, 18 Սեպտեմբերին, առտուան ժամը 8:00ին:  
Դասերու սկիզբ  
Միջնակարգ եւ երկրորդական 24 Սեպտեմբեր 2003  
Նախակրթարան 29 Սեպտեմբեր 2003  
Մանկամտուր եւ մանկապարտէզ 6 Նոյեմբեր 2003

Հասցէ՝ Շայ Կաթողիկէ Մենտրոպեան բարձրագոյն վարժարան, Պոլորձ Կամուտ, Արաքս փողոց, հեռ. 260504: E-mail: administration@mesrobian.com

**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ**

**«ԿԱՆԱՅ ԶԱՅՆ»**

### «ՏԵՍԱԿԷՏ» ՅԱՅՏԱԳԻՐԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 16 Սեպտեմբեր 2003, կեսօրէ ետք ժամը 5:00ին, կրկին պիտի ձայնասփռուի Երեքշաբթի, 2 Սեպտեմբերին ձայնասփռուած «Թըքս-սիրութեան տարբեր երեւոյթներ» խորագիրով յայտագիրը՝ ընդառաջելով ունկնդիրներու առաջարկին:

### ՄՏՔՈՎ ԹԵՐԱՃ ՀԱՅՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ԶՈՒՄՐՈՒՆՑ» ԿԵԴՐՈՆ

### ԿԵՐԱՍՈՒՏ

2003-2004 տարեշրջանի

Վերանուտ՝ Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2003ին: Կեդրոնը կը շարունակէ ընդունիլ հին եւ նոր աշակերտներ՝ երկսեռ մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ:  
Կեդրոնը ունի աշխատանոցի դրոսիւն եւ ինքնաշարժի սպասարկութիւն:  
Հասցէ՝ Խալիլ Պատաուի, Գալսկին Կենաց վարժարան:  
Հեռաձայն 01-446442  
Էլեկտրոնային 01-562373  
E-MAIL: ZVARTNOTZ@terra.net.lb

Եւ Սասնազատացած դաստիարակութիւնը առաւել չափով արդիւնատու կ'ըլլայ, երբ մանուկներ փոքր հասակին կեդրոն կը ներկայանան:

### Հ. Մ. Ը. Մ. ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԾԻՎ

### ԱՆՂԱՍԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ Գ. ՆԻՍՍ

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր 2003ին երեկոյեան ժամը 8:00ին. Հ. Մ. Ը. Մ. Ի բաղադրի ակումբին մէջ:

**ՎԱՐՉՈՒԹԻՆ**

